

8839

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Հրապարակախոսութիւն

281.64

F-49

Թիֆլիս

Էլեգանտ 87 ՕՐ. և ԱՐԱՆԵԱՆՑԻ, ՊՈԼԻ. 7
1908

04 NOV 2009

ԲԵՆԿԱՎԱՐԴԱՐ

281.69


Р-49



ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



(Հրապարակախոսութիւն)



Հ:

788
12794

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՏՊ. Օ. Ն. ԱԼԱԽԱԲԱՂԻ ՊՈԼԻՏ 7.
1908

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

I

Վերջալուսի խոներ

Ի Տէր հանգեաւ Հայոց Հայրապետը.

Հայ ազգն անօրինակ շքեղութեամբ, բերկրապատար աղաղակներով, որոտընդուստ ծափերով հանեց նրան բռնութեան վանդակից ու բերաւ բազմեցուց Մեծ Լուսաւորչի գահի վրայ:

Անօրինակ թափօրը, որ աշխարհի ամենաերկար գետի էր նման, իւր սկիզբն առաւ Սիօնի սարից, Գողգոթայի լանջից, կտրեց անցաւ եւրոպան հարաւից՝ հիւսիս, լայնատարած Ռուսաստանի լայնքը չափեց ու կովկասի բարձունքը քերելով՝ Արարատի ստորոտում ձովացաւ:

Փոքր ազգի հսկայական թափօրի վրայ ափիբերան մնաց աշխարհ, եւրոպն ու Ասիա: Հետցող սրաերից բեկուած բացականչութիւնների արձագանքը յետ դարձաւ Նեղոսի ափերից, Հարէշստանի և Կորդիլերեան լեռնաշարերից ու խառնուեցաւ հայոց ազգի տօնական ժխորին:

1302 - 83

Մեծ բանաստեղծին, կայծակնաշուրթն քառողչին, խորաթափանց հոգեբանին, ինքնուս տաղանդաւոր խորհրդածողին Հայ ազգն ընտրել էր իւր փրկութեան տապանը յանձնելու, որպէս յանդուգն նաւապետի, որ գիտէ ղեկավարել, գիտէ ակօսել երեսը ծովու, յետ մղել կատաղի մոռնչն ալեաց և նաւահանգիստ հանել յինքն յուսացողաց:

Ով առաւել յարմար էր այդ վսեմ կոչման, մւմ առաւել սիրով յանձնէր իւր փրկութեան գործը խաւարի մէջ խարխափող, չարտանջ հայը, եթէ ոչ նրան, որի շրթունքներից այս հրաբուրիչ տւետիքն էր թոել: «Աս թթովս խայոց թագաւոր պիտի օծեմ»:

Այլ աւանդ հիացողին զինի հիասթափութեան: Հայ ազգի փրկութեան նաւը ղեկավարելիս կեանքի մըրկայոյգ ծովի վրայով, նա ցնցուելով զգաց, թէ վասիչ մարդու հուժկու բազուկ չէ իւր թոյլ բազուկը, բանաստեղծական հոգու բոցավառ լապտերը չէ լուսաւորում նաւապետի մշուշով պատաժ ճամբան: Քարոզի տաղանդը, հոգեբանի խորհրդակցական հանձարը, փորձնական ճարտարութիւնը օգնութեան չեկան նրան:

«Միթէ ամենեքին առաքեալք իցեն, միթէ ամենեքին մարդարէ՞ք իցեն, միթէ ամենեքին զօրութիւնք իցեն, միթէ ամենեքին շնորհս բժշկութեանն ունիցին»:

Եւ նա՛ ի ներքուստ լքեալ, տարիքով ծանրաբեռնեալ նաւապետը մահու շնչով գերեզման իջաւ: Իսկ գերեզմանից դուրս, իւր շուրջը մընաց լոկ բեկումն սրտերի, վհատութիւն նաւաստիների, աւեր ու սրածութիւն ժողովրդի, «որքինայուսացան»: Եւ նաւն երերուն հողմավար հեռացած նաւահանգստից, անդունզների բերանում:

Մեծ բանաստեղծի, հանճարեղ քարոզչի, բոցավառ հայրենասիրի անցելոյ քաղցը յիշողութիւնը հայ ազգին մի վերջին անգամ ևս ժողովեց նրա առջև խունկ բուրելու, արցունքով ցողելու նրա շիրիմն ու դամբարանը, իբրև վերջին երկրաւոր վարձատրութիւն իրական արժանեաց:

Թափօրը վերջացաւ... ամենը ցրուեցան, թողնելով որ կեանքի ժխորից հեռու և մեկուսի պատմագիրը, որ գիտէ գերեզմանները խօսեցնել, իր գաղտնաբանիցը դուրս գայ, արդարութեան կշիռն ի ձեռին՝ կանգնի Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի գերեզմանի բով ու իւր հաշիւն ու համարը պահանջէ նրանից և Հայ ազգից, յետնորդ սերնդին ներկայացնելու համար:

Մի ջերմ համբոյր ծնկաչոք նուիրելով մեծ բանաստեղծներուն նման, քարոզիչներուց աննման մեծ ժողովրդականի աճիւնին, մենք էլ հրաժեշտ ենք տալիս անցեալի բաժին դառած Հայրապետի գերեզմանին ու յառաջ ենք, շարժ-

ւում այս գիշերուան պահուն դէպի այն կողմն,
ուր մեր Բեթհեղիմի խաւարամած այրի վրայ
նոր աստղ պիտի բոցավառուի:

II. Սակաւ ինչ իմաստովթին

Կոյը են մարդիկ, որոնք կարծում են, թէ
Բնութեան օրէնքից գուրս կամ նրանց հակա-
ռակ կարելի է ապրել և երջանիկ լինել:

Արդարութեան օրէնքը՝ որ հատուցումն է,
Բնութեան օրէնք է:

Համայն տիեզերքում չկայ մի անկիւն, որ
արդարութեամբ լեցւած չ'լինի. չկայ մի երկոյթ,
որ բնական օրինաց հակառակ հանդէս գայ և
արդարութիւնը զայն չ'պատճի:

Եթէ ծանրագոյն դժբախտութիւն է եկել,
հասել մի անհատի վրայ, ովք է մեղաւոր, եթէ
ոչ ինքը՝ անհատը (մեծ մասով): Ի զուր են ա-
պերջանիկ անհատները սար ու ձոր լցնում ի-
րենց թշուառութեան մրմունջով: Դարերի բա-
րոյագիտական ասացուածներն անհատի ապա-
բաղութեան պատճառը նոյն անհատի մէջն են
որոնում ու գտնում:

Անհատը պատժուած է այն պատճառով,
որ Բնութեան օրինաց հակառակ է ընթացել:
Բնութիւնը՝ որ իր զաւակաց խանդավառ մայրն
է, իւր ծոցից հեռացող, իւր օրէնքներով գծած

շաւդից շեղուղ զաւակին յուղութիւն կոչելու
ապարդիւն ջանքերից յետոյ, սոսկալի կերպով
պատժում է նրան:

Բնութիւնը պատժում է անիմաստութիւնը,
իսկ Բնութեան օրէնքներից շեղուել կամ նրանց
հակառակ ընթանալը կատարեալ անիմաստու-
թիւն է:

Ազգերի պատուհասը նոյն անիմաստութեան
արդիւնքն է:

Երբ մի ազգ հեծում է թշուառութեան աւե-
լլով, այդ նշանակում է, թէ նա հեռու է իմաս-
տութիւնից, ի բացեայ՝ Բնութեան օրէնքից. թէ
նա Տիրական օրէնքը մոռանալով, Քաօսի, Մա-
մոնայի, Եսականութեան շինծու օրէնքով է ա-
ռաջնորդւում և իմաստուն առաջնորդների դե-
կեկավարութիւնը մերժելով, անիմաստ դեկավար-
ների ձեռքն է ընկած:

Այս տեսակ ազգին Քաօսը պիտի կլանէ
վերջ ի վերջոյ:

Վատ դեկավարների ձեռքն ընկած ազգին
շատ յարմար է գալիս մարգարէի իմաստուն
հեռատեսութեամբ ասուած խօսքը թէ «Սերմն
ժանտ, որդիք անօրէնք, թողին զծէր և բարկա-
ցուցին զՍուրբն Խորայէլի»... ուստի և երկիր
ձեր աւերակ, քաղաք ձեր հրձիգ, զաշխարհ ձեր
առաջի ձեր օտարք կերիցեն, աւերեալ և կոր-
ծանեալ յազգաց օտարաց»:

Իսկ Տիրոջ օրէնքը նոյն Բնութեան օրէնքն է, իրականութեան օրէնքն է:

Հաստակող, ծանրալուր հայ ազգի ականջին դարերի ընթացքում դժուարութեամբ է հասել տիրական օրինաց ձախը:

Բաժանման, Եսականութեան, Քաօսի օրէնքներով առաջնորդուելով՝ նա իւր կոյր անիմաստութեամբ այնպիսի ղեկավարներ է ընտրել մեծ մասով, որոնք առաջնորդել են նրան դէպի կորուստ: Քաօսը շատ բան արդէն կլել է հայ ազգից և սպառնում է այդ ժողովրդի մնացորդն էլ կլանել:

«Սոպո և բիրտ ազգս հայոց» (Առաքել պատմագիր), «տիրանենդ, տիրասպան և մատնիչ ժողովուրդս» (ա. Սահակ Պարթև) իմաստութիւն չի սիրել, հանճարն է ատել և իւր կուրութիւնը ղեկավարելու համար՝ իրենից առաւել կոյրին է ընտրել իրեն առաջնորդ, որպէս զի՞ ըստ աւետարանական բանին, երկուքը միասին խորիսորատ ընկնին:

Աչքիս յանդիման է գալիս տիրատեաց անիմաստութեան սևաթոյր պատկերներ, որոնք մեր պատմութեան էջերու վրայ որպէս լի գրչից կաթած մելանի սև բիծ են մնացել:

Հայ անիմաստ ժողովուրդն ու աւագանին հայոց աշխարհին լոյս ու փառք բերող Սահակ Պարթևին հայրապետական Աթոռից զլորեց ո-

տար իշխանի ձեռքով և իր ովաննայրվ լի ձեռքը դէպի փառամոլ Արծէկէացին, ասորի Շմուէլն ու Բոքիշօն մեկնեց, որպէս զի Արդարութեան ցասկոտ Օրէնքը նրան պատժէ և դատապարտութեան աղուէսագրոշմ դնէ նրա ճակատին տիրական օրինաց աշակերտ և հայրապետի ձեռքով: «Քահանայանալի վերայ տիրանենդ և՝ տիրասպան և՝ մատնիչ ժողովրդոց ոչ կարեմ... երթայք յինէն ի բաց և թոյլ տուք ինձ ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց»:

Եւ այդ գրոշմը գարերի մաշող ձեռքն անդամ չէ կարողացել չնջել հայի ճակատից:

Իրենց անհատական երջանկութեան լապտերը կամաւ հանգցրած Ղազար Փարբեցին, Մովսէս Խորենացին իրենց չնաշխարհիկ խմբով մերժուեցան հայոց ժողովրդից: Բնական Օրինաց հակենթաց արշաւող հայը վանեց նրանց իր գրկէն դէպի լերանց մթին այրերը և իրեն համար հոգևոր հայր, մտքի և սրտի առաջնորդ ճանաչեց «ստախօս աբեղաներին», Խաւարի և Քաօսի որդոց, որոնք հայոց աշխարհը տղիտութեան օրօրոցը դնելով՝ օրօր կարդացին դիռ շատ օրեր:

Բնութեան Օրէնքը պատժեց հային իւր հարազատ գաւակի ձեռքով. Խորենացու ողբը՝ որպէս պատուհասի դատակնիք, գրոշմուեցաւ Հայոց Աշխարհի աւերակների վրայ:

Ողբացողի անարգանքի մէջ ջերմ հայրենասիրի օրհնութիւնն էր թագնուած, իսկ «ստախոս աբեղաների» շողոմքոր օրհնութեան մէջ անէծք. և անիմաստ հայը վերջինն ընտրեց:

Շատ են հայի անիմաստութեան օրինակները, որոնք շարան-շարան անցնում են պատմութեան վրայով, բայց մենք նրանցից աչք վերցնելով՝ դէպի ներկան ենք դարձնում մեր հայեացքը:

Մենք կանգնած ենք այժմ ներկայի առաջ: Ամօթի խեղդող զգացմունքը, որպէս մղձաւանջ, ուժգնապէս սեղմում է մեր կոկորդը:

Նոյն անիմաստ հայը, Բնութեան Օրէնքից խուսափող, Քաօսի արժանաւոր որդեգիրը:

Հայրենի տաճարի բեմը թափուր շնորհալի, լուսաւոր քահանայութիւնից (ընտիրների սակաւ բացառութեամբ), որոց տղիտութեան առջև գիտութեան դոները փակ են, և Աւետարանը՝ մթին աշխարհ, հայրենասիրութիւնը՝ մաշուած ձորձ, հաւատը՝ հեգնութիւն, Աստուածը՝ «որովայնն իւրեանց»:

Եւ հայ քահանան ընտրեալն է, ժողովուրդն՝ ընտրողը:

«Յաթուն Մովսիսի նստած են դպիրքն ու փարիսեցիք»: Բարձր հովութիւնը յանձնուած է քան զբազում քահանայս տղէտ հովիւներու, սակաւ բացառութեամբ: Կոյր քահանայութեան

կոյր առաջնորդներ, որոց հօտը առաւել կիրթ ու լուսաւոր է քան ինքեանն: Եւ այս լոկ երկդասեան դպրոցի գրակարդացներուն յանձնուած է հայոց ստորին ու միջնակարգ վարժարաներունեկավարութիւնը, որոց մէջ աւանդուող պէսպէս ուսմանց առաջ նրանց զգայարանքները խուլ են ու համբ: Ուստի զարմանալի չէ, բայց յոյժ ցաւալի, որ միջնակարգ վարժարաններից մէկի՝ զերթ սիրամարգ պճնազարդեալ և շքանշանօք ձոխացած հոգեսոր անգլուխ Գլխից հոգաբարձու երիտասարդները ձայնն ունախագահութիւնը խուլում են իբր տգէտից ու նրան թողնում լոկ համդիսատեսի պաշտօնը:

Եւ այս հովիւներն ընտրեալն են, հայ ժողովուրդն՝ ընտրողը:

Հայոց եկեղեցիներու գանձն ու բարեկարգութեան գործը յանձնուած է մեծ մասով յափշտակող, եսական, գող մարդկանց, որոնք երեցփոխան անունն են կրում: Երեցփոխանների զեղծմանց խօսքն ու զրոյցը ամենուրեք է հրոշակ հարկանում. բայց լուռ է ժողովուրդը, հիւծուում է աղքատութիւնից եկեղեցին, նուազում բարեպաշտութեան լուման տաճարի գանձանակում:

Եւ այս երեցփոխներն ընտրեալն են՝ ժողովուրդն՝ ընտրողը:

Մեռել է իսկական տաղանդը հայ ժողովուրդի

մէջ. և տաղանդն սպանողը հայ ժողովուրդն եղաւ,
երբ բազկատարած իր գիրկն ընդունեց ու գը-
րական բեմի վրայ բազմեցուց թերուս, անտա-
ղանդ գրչակներին, որոց գրուածքներն առաւել
շուտ պիտի հնանան, քան իրենց մէկ ձեռք հա-
գուստը:

Եւ այս գրական խրտուիլակներն ընտրեալն
են, ժողովուրդն՝ ընտրողը:

Եւ այլն, և այն, և այլն:

Իսկ ուր են ազգի սակաւ ընտիրները.

«Սոզո և ըիրտ ազգս հայոց» վանել է նը-
րանց գէպի ցուրտ տուանձնութիւնը և նըրանք
տարակուսանքներու մէջ ափիբերան ծփում են
ու հին իմաստունի խօսքը մրմնջում.

«Տեսեալ ի ստորինս խառնակ զամենայն,

Զիմակ մարդկան յաւէրժ ի մթան,

Զվատաց կայտոփի, զլաւաց կական,

Կրօնք ի սրտէս անկանին կործան:

Եւ յիս գայ խորհուրդ թէ աշխարհ համայն
Վրիպական վարի անհանձարական,

Կամ թէ չիք խնամ Աստուած պետական,

Եւ կամ չունի փոյթ նա առ մեր խնամ»:

Բնութեան Օրէնքին հակառակ է ընթանում
մեր ազգն իւր կենաց ղեկավարութիւնը անփ-
մատ իմաստուններին յանձնելով և այդ պատ-
ճառով Քաօսը իւր ահուելի բերանը բաց է արել
ընդ հուալ կլանելու հայ ժողովրդին: Արիւն, ար-

ցունք, աւեր, յօշոտումն, հուր, սուր, մահ, սով,
գաղթականութիւն, բանդ, որոնք կաօկօնի օ-
ձերու նման իրենց գալարումներով պրկել են
հային ու խեղդամահ անում, Բնութեան պատիժն
է հայի անիմաստութեան համար:

Հայ ազգ, դու քո անիմաստութեամբ Բը-
նութեան Օրէնքը յարուցիր քո գէմ. դու «բռեալ
գերեզմանները» սիրեցիր, որոնք՝ ըստ աւետա-
րանական բանին, արտաքուստ գեղեցիկը են,
իսկ ներքուստ լի են ոսկերոտօք մեռելոց և կեն-
դանի մարդկանց մերժելով՝ քո կեանքիդ ղեկա-
վարութիւնը նրանց հաւատացիր, որոնց գործոց
կատարածը, վախճանը կորուստն է և «յանդունդա
հայի»:

Հայ ազգ, քեզ պէտք է սակաւ ինչ իմաս-
տութիւն:

III. Երկու տիպարի ընտրելիներ

Կենսական անհրաժեշտ պահանջ է, որ
մարդկութիւնը առաջնորդեալներ և առաջնորդող-
ներ ունենայ: Առաջին դասը ընտրող բազմու-
թիւնն է. երկրորդն՝ ընտրւող սակաւամանու-
թիւնը: Վերջինս երկու տիպարի ընտրելիներ է

տալիս աղգեր, ժողովուրդներ ու համայնքներ կառավարելու համար:

Ընդհանուր ազգաց ու կրօնների պատմութիւնը, ինչպէս և կեանքի դիտողութիւնների ընդհանուր եղբակացութիւնն իրաւունք է տալիս մեզ այդ երկու տիպարի ընտրելիներին կամ դեկավարներին անուանել Ամբոխի ընտրեալ և Ծնորհաց ընտրեալ կամ կրօնի լեզուով՝ ընտրեալն ի մարդկանէ և ընտրեալնի վերուստ: Նոր ժամանակի լեզուն սրանց համարձակ կարող է անուանել գործնական մարդիկ կամ նիւթապաշտներ՝ մատերիալիստ և գաղափարի մարդիկ կամ իդէալիստներ:

Որպէս կարմիր թել է ընկած յատկութեանց հետեւալ շարքը նրանցից իւրաքանչիւրի ընտրութեան մէջ, որ և նրանց ուղին է գծում:

Գործնական մարդիկ իրենց խոհերի և ձրդտումների առարկան միայն իրենց կարճատեկեանքով և իրենց հետ ապրող սերնդով են սահմանափակում: Ուստի իրեւ ուսումնասիրութեան նիւթ վերցնում են միայն ժամանակակից կեանքը, նրա արամադրութիւնը, հոգեկան և նիւթական պահանջները, զորս իրենց նրբին հոտառութեամբ ըմբռնելով՝ աշխատում են իրագործել և շահագործել: Ժամանակի կամ ամբոխի տրամադրութիւնը կարող է անցողական, մշասաբեր լինել ապագայի համար, այդ փոյթ չէ գործնական

մարդուն, որ ոչ անցեալով է դեկավարուում, ոչ ապագայի յոյզերով ապրում: Այստեղից բղխում է գործնական մարդու և միւս յատկութիւնը, որ նա ամէն ինչ կապում է իւր անհատական կեանքի, երջանկութեան հետ: Ժողովրդի տրամադրութիւնը, ամբոխի յեղեղուկ զգացմունքները շոյելով, գովելով, գործադրելով՝ նա գոհացնում է իւր մարմնական և փառասիրական հակումները:

Գործնական մարդը ճկուն է հոսանքի առաջ, ուստի և անյոդդորդ կամք ունենալ չի կարող, զի հոսանքները տեսական չեն և շատ անգամ հակասական:

Գործնական մարդը միշտ ամբոխի գլուխ անցնելով՝ ոյժերից ամենատարերականի, նրա հերոսն է:

Անձնական բարօրութեան նպատակով՝ դեկավարուելով՝ գործնական մարդը առաքինութիւնները գործ է ածում ըստ տեղուոյն ու հանգամանքին. ըսնաւորի մօտ նա ստրուկ է և շողոքորթ, նրանից ծածուկ՝ ազատութեան հրաւիրակ, անհաւատի մօտ՝ հաւատը հեգնող, բարեպաշտի մօտ՝ կեղծ երկիւղած, առանձնութեան մէջ՝ շահամոլ, ամբոխի առաջ՝ առատաձեռն բարեգործ.

Այս և նման հակասութիւնները գործնական մարդը իւր տաղանգով ծածկում է ամբոխի աշշքից, որ կոյք է. իսկ տեսանող սակաւներից նա

չի երկնչում, վասն զի իւր ետեից ամբոխ ունի։
Գործնական մարդն ամբոխ կարապետելով
հանդերձ իւր սրտումը ծիծաղում է նրա վրայ
և կարող է ասել. «Ոչ ոք չկարծի թէ ինձ խա-
բում են, ես եմ ամենքին խաբում»։

Գործնական մարդու շրթունքներում միշտ
ժպիտն է ծաղկած՝ ուրախ մարդկանց մօտ, աչ-
քերն արցունքոտ՝ սգլորների մօտ։

Գործնական մարդը գաղափարներ սերմա-
նող, երկնքի կայծ խաւար երկրին բաշխող հան-
ձար չէ, այլ լոկ գերասան և յաջողակ այն դե-
րերի մէջ, որոնք իւր նպատակին առաւել շա-
հաւէտ են։

Գործնական մարդու ուղին վարդերով և ով-
սաննայով է ցանուած գործունէութեան առաջին
օրից մինչև գերեզման։ Բայց նա հէնց այն օրն
էլ մեռնում է շարունակող կեանքի համար իբ-
րև ոգեսրող յիշողութիւն, իբրև առաջնորդող
աստղ, որ օր որ գերեզման է իջնում. այսինքն
այն օր՝ երբ իդէալիստները գերեզման իջնելով
նոր են ծնւռում յետնորդ սերունդների համար
իբր անմահութիւն։

Այս են և նման գլխաւորապէս գործնական
տիպարի մարդկանց յատկութիւնները, որոնց ամ-
բոխն անձնատուր է լինում իբրև զեկավարների,
լինին նրանք բանաստեղծ, վիպասան, գեղա-
րուեստագէտ, կառավարիչ, դատաւոր, հրատա-



բակախոս և այն և այս Մանուկյան
Գործնական տիպարի մարդիկն են, աշխարհի այն սակաւ-
ները, որոնց ասպարէզ նետողը իրենց ներքին
աշխարհն է, հոգին է։ Մի ամէնիմաստ ձեռք
նրանց շնորհալի գլխում մի բոցավառ լապտեր
է զրել, որի լուսով նրանք կարողանում են ըն-
դարձակ հորիզոնով տեսնել անցեալլ, ներկան
ու գալիքը մի բուռն զգացմունք հրդեհել նրանց
կրծքի մէջ, բարու, վսեմի, գեղեցկի զգացմունք։
Երջապատի խաւարը ձնշում է նրանց սիրտը և
նրանք իրենց պայծառ մտքից շողեր են արձա-
կում գէպի խաւարասէր ամբոխը, կայծահան
շրթունքներով ցոյց տալիս կեանքի ուղիղ ճա-
նապարհը։ Նրանք այն յանկարծահաս սրարշաւ
հոգմերն են, որոնք փչում են ճահճի վրայ ու
վանում գարշահոտութիւնը։

Սակայն սովորութեան սոսկալի ոյժը, որով
կրիայն իւր ցեխոտ օթեանն է սիրում, խեցգե-
տինը՝ իւր բարաժայոի ծերպը, գորար իւր ճա-
հճը, ամբոխն իւր ներքին աշխարհի անթափանց
խաւարը, թոյլ չի տալիս որ երկնային մտքի լոյ-
սըն ու զգացմունքի ջերմութիւնը ըմբռնելի և
սիրելի լինի ամբոխին, եւ գաղափարի մարզը
իւր հրաշէկ հոգուց երկինք վառող հոգոցներ է
արձակում։ «Եկայ աշխարհի մէջ կրակ ձգելու
և ինչպէս ուղում եմ, որ այդ հուրը բորբոքուի»։

Գաղափարի մարդը սիրում է ամբոխը, բայց առում է նրա կուրութիւնը, ապականութիւնը, տարերականութիւնը։ Նա ձգնում է նրան դէպի լուրջը քաշել, դէպի՝ ուր ինքն է բարձրանում։ Նա բարձր է կանգնած ամբոխից, նա բարձրից է նայում աշխարհի վրայ, որպէս եթերքում սաւառնող արծիւ, ուստի և աշխարհը իւր ընդարձակութեամբ է տեսնում։ Նա նման է այն զօրավարին, որ ամբոխի մոլեալ կռուից ճեռու, բարձրութիւն է կանգնած։ տեսնում է ամբողջ պատերազմի դաշտը և կռուին ուղղութիւն տալ կարող է յաղթանակով պսակել։ Այդ բարձրութեան վրայ կանգնածը ամբոխի ծափերին չի կարօտում։ Նրա պակասութիւնների մոլորութեան վրայ գարնան երկնքի նման է որոտում և ժամանակակից ամբոխը... նրան չի սիրում։ «Ի՞նչ ես ուզում, կանչում են նրան Գեննեսարէթի տիում արածող գիւաբնակ խոզերը, Դաւթի որդի, եկար կորցնելու մեզ»։ Ուր բերիր մեզ այս անապատներում կորցնելու, չենք ուզում քո Աւետեաց երկիրը ու ազատութիւնը, մեզ համար աւելի լաւ էր Եգիպտոսի ստրկութիւնն ու ամէնօրեայ սոխն ու սխտորը, գոչում է քարաբարձ ձեռքով ամբոխը Մովսէսի երեսին։ Տանելի չէ մեզ, որ ամենքը նրան արդար են համարում, թող կորչի Արիստիդէսը մեր խեցի վճռով»։...

Եւ այս կոյր, տարերական ու վարակիչ կատաղութիւնը բորբոքում, հրդեհուում է գաղափարական մարդու ձանապարհի վրայ նրան լափելու համար, իսկ նա քայլում է յառաջ այդ բոցերու վրայով, իւր հայեացքը դէպի վեր, դէպի եթերքի շողջողուն լապտերներն ուղղելով։ «Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի»։

Սրանք ընտրեալն են երկնքի և այն սակաւ երկրաւորների, որոնց մէջ ձշմարտութեան, իմաստութեան, վսեմութեան մի կայծ կայ։ Սրանք բազմութեան ընտրեալը, խաւար ամբոխի, կուսակցական կազմակերպեալ ամբոխի ընտրեալները չեն, լինեն սոքա բանաստեղծ, վիպասան գեղարուեստագէտ, կառավարիչ, դատաւոր, հրապարակախօս և այլն։

Գաղափարի մարդկանց ման էլ նման չէ զործնական մարդկանց մահուան։ առաջիններն ընկնում են կամ իրենց հոգեկան մաքուր զգացմանց հրովը ճարակուած, կամ ամբոխի ձեռքից։ Սրանց գերեզմանների վրայ հրաշք է կատարուում։ արձանանում է նրանց յիշատակը երկրից երկինք ու իր հետ դէպի վեր քաշում աշխարհի նորաբաց հայեացքը և գերեզմանների, մեռելութեան պահապանները սարսափահար գոչում են։ «Արդարե այրս այս Որդի Աստուծոյ էր»։

Կատարեալ ազգերը, հոգով բարձր ազգերը կարողանում են գաղափարի մարդկանց ջոկել կեան-

քի սովորական դերակատարներից, իսկականը խաբուսիկից և իրենց ղեկավար, առաջնորդ ընտրելու համար, առաջինների՝ իդէալիստների խմբի մէջն են որոնում:

Իսկ ազգ՝ որ գործնական դերակատարներին դերադասութիւն է տալիս. ազգ՝ որ իդէալներ չունի և առօրեայ նիւթական, եսական հողսերով կուրացած՝ դադախարի մարդկանց մէջ ընտրեալ չի որոնում, նա յանձին իւր ընտրեալի դերեզմանափոր է ընտրում իրեն համար:

Ազգ, հաստատութիւն, եկեղեցի, որ իւր թիկնադարձ «հրաժարիմքը» չի տալիս անարժանին, որպէս սատանայի, ընկնելու կորչելու ազգ է, հաստատութիւն է, եկեղեցի է, յաւիտենական մռացութեան դատապարառած:

IV Պատուհաններից ծայրագոյնը

Աստուած սարը կ'առենի,
ձիւնը կ'դուի
(Ժող. Ասած)

Մասնաւորում ենք մեր մտքերը.

Առաւել գաժան պատիժ չկայ մի ընտանիքի համար, քան երբ նրա գլուխը՝ հայրը տիսմար է, անարժան: Մի հօտի համար՝ երբ հովիճն անարժան ու իւր հօտը դալարագեղ ջրարբիներու վրայ արածեցնելու փոխարէն, աւագուտ, ան-

ջրդի անապատներն է քշում: Մի ազգի համար՝ որի գլուխը՝ ղեկավարը՝ տգէտ, անխմաստ, թուլամորթ, «իբրև զեղէզն շարժուն ի հողմոյ», անյարմար է իւր խաչը պարծանօք կրելու:

Եթէ հայ ազգը իմաստուն ազգերու դասողական շնորհքն ունենար, անշուշտ պիտի տեսնէր թէ պատմութեան նորագոյն շրջաններում, սկըսած Յովհաննէս Կարբեցի կաթուղիկոսի ընտրութիւնից մինչև վերջին հայրապետի ընտրութիւնը, երկու բացառութեամբ միայն, պատուհաններից ծանրագոյնը ճնշում է մեզ, հիւծում ազգն ու եկեղեցին, իբրև արդար հատուցումն մի ժողովուրդի, որ պատմութեան փորձերից ու փորձաներից խրատուելու համար դեռ համբակ է, որ սուրբ գործին անսուրբ սրտով է մօտենում:

Մեր յօդուածի ընաւորութիւնը թոյլ չի տալիս Կարբեցուց սկսած համառօտագրել հայ ազգի անսուրբ խորհուրդները հայրապետական ընտրութեանց սուրբ գործում, որոնց հետևանաց դառնութիւնը ծծելով բամում ենք ց'այսօր: Մենք լոկ մի քանի գիտողութիւններ կանենք վերջին ժամանակներից լուսաւորելու այն պատճառները որոնք պատժապարտ դարձուցին մեզ, սուրբ գործն անսուրբ անելով:

Մելքիսեդէկ Մուլագեան և Մակար սրբազն արքեպիսկոպոսներու թեկնածութիւնն էր

գրուած։ Մակար արքեպիսկոպոսը խոհական, պատկառելի անձնաւորութիւն, հայրենասէր, բայց սուկաւուսումն, ժամանակից յետ ընկած, ծեր, ուստի և դանդաղամիտ և պակասենդ։ Մուշատեան սրբազնը նոյնպէս պատկառելի, առաւել ժամանակակից ուսումով, զինուած հզօր դրչով, աղու լեզով, համեմատաբար առաւել երիտասարդ, ուրեմն և բնականաբար առաւել եռանդաշատ։

Ազգի բազմութիւնն ընտրեց Մուշադեանին։ Մակար սրբազնին շուրջ բոլորած կուսակցական բուռն ոգին իւր ընտրեալին առաջին կարգի ընտրելի դնելու անյաջողութիւնն ունենալով՝ ամենայն ջանք գործ դրաւ երկրորդ ընտրելի անել, այն խորունկ համոզումով թէ նա կը հաստատուի։ Դեռ պատանի էինք այն օրերում, երբ ձեմարանից փախել, վանքի բակն էինք մտել այրող հետաքրքրութեամբ թէ երբ արդեօք Մայր Տաճարի փակ դռները կը բացուին, երբ աղքի սրբագումար ժողովն այնակղից կելնէ և կաւետէ հայրապետի ընտրութիւնը։ Վերջապէս բացուեցաւ աւագ դուռը, ելան ազգի երեսփոխներն ու ծաղկած ժպիտով Մուշադեան սրբազնի ընտրութիւնն աւետեցին։ Դոյն այդ վարկենին Մակար սրբազնի կողմնակիցներից մինը, համալսարանական կրթութեամբ, երբ երկրորդ ընտրելի իմացաւ նրան, գլխարկը դլխից

հանելով և ձեռնափայտի վրայ բարձր տնկելով՝ աղաղակել սկսաւ։ «Կեցցէ Մակար սրբազնը, նա է կաթուղիկոս»։ Մեր մատաղ հոգու վրայ մի անորոշ թախիծ բերաւ այդ աւետիքը, «Բ բազմութեան աւետիքը չէր։

Ծնցան ամիսներ, երբ հաստատեալ Մակար սրբազնագոյն կաթուղիկոսի կառքը կանգ առաւ ձեմարանի դիմացը, ուստի եկեղեցական թափօրով նա Մայր Տաճար պիտի մտնէր, առաջին ձիչը նոյն պարոնն արձակեց։ «Կեցցէ Մակար կաթուղիկոս»։ Մենք յիշեցինք ընարութեան աւուր «կեցցէն» ու դարձեալ թախծեցաւ մեր հոգին։

Տարտկոյս չկար, որ մի նեղ կուսակցութիւն, որ ոչ բարձր գաղափարներով էր առաջնորդուել, ալ իւր անձնական շահով, յաղթամնակեց և Մակար սրբազնի կաթողիկոսութիւնը յաջողցուց։

Դուցէ ոչ ոք այնքան չէ յարգել ու սիրել Մակար կաթողիկոսին որքան մենք, ոչ ոք այնպէս չէ ողբացել նրա մահը, որպէս մենք նրա գերեզմանի վրայ, երբ մեր դամբանական ճառով շատ սրտեր իսկ շարժեցինք. ոչոք այնչափ չէ յարգում նրա յիշատակը, որչափ մենք։ Մակայն այդ ամենը արգելք չեն լինում մեզ բացարձակ յայտնելու, թէ Մակար կաթողիկոսին ընարողները կուսակցական շահերով սուրբ գործին մերձեցան և եկեղեցին ու ազգը պատուհաս կրեց։

Ահա թէ ինչպէս. արժանաւորագոյն ընտրեալ Մելքիսեդեկ սրբազնը հարկաւ մռացուեցաւ. Ազգը լոեց ու խոնարհեցաւ ճակատագըրին. բայց արդարութեան ձայնը, պատուհասող ձայնը չուեց: Իսկապէս հոգով հայրենասէր Մակար կաթողիկոսը ժողովրդի խաւերու մէջ օտարամոլ հռչակուեցաւ: Ժողովրդի անգիր բանահիւսութիւնը նրա անուան շուրջը անուանարկիչ երգել հիւսեց, մեղքեր բարդեց, որոնց մէջ նա անմեղ էր իսպառ: Արդարութիւնը կատարուած անարդարութիւնը պատուհասելու համար՝ Մակար կաթողիկոսի բանակին հակառակ բանակի ձեռքն աւելի անարդար մտրակ դրաւ, որ անարդարութիւնը անարդարութեամբ պատժուի:

Ազգը պաղեցաւ եկեղեցուց, նուիրապետութեան վարկն ընկաւ. հոգեպէս անմշիթար անցուց իր սակաւ կեանքը իբր մարդ արժանաւոր Մակար կաթողիկոսը և ծերութեան անզօրութեամբ (արդեօք) վախճանեցաւ սակաւմեայ հայրապետութիւնից յետոյ, իւր սկսած բարի ձեռնարկութիւնները թերի թողնելով:

Եկաւ տեսական անիշխանութիւնն ու գլխեց ազգի ու եկեղեցու այն սոսկալի պատուհասը, որի հիմքը կուսակցական անարդարութիւնն էր դրել:

Այս է անբաժան հետեանքն ամէն ժամա-

նակ, երբ սուրբ գործին անսուրբ խորհրդով են մօտենում:

Մակար կաթողիկոսի մահուամբ չայ Ազգի մի մասը փոխանակ խոհեմանալու և խոյս տալու Արդարութեան դատաստանից ու ծայրագոյն պատուհասից, ընդհակառակն՝ ոչ միայն բարձր չմնաց Մակար կաթողիկոսի կուսակցութիւներից, այլ շատ վարիջաւ: Կազմուեցաւ մի զօրեղ կուսակցութիւն, կուեցաւ մի նեղ կուսակցական դաշինք վանական նեղսիրտ կրօնաւորներից մի մասի և մամուլի մի մասի մէջ: Ազգի և եկեղեցու շահը մի կողմ նետուեցաւ. նպատակ ճանաչուեցաւ միայն կուսակցական շահը, որին համնելու համար ամենայն զագիր միջոց գործ գրուեցաւ: Կուսակցական կուրութիւնը յանդգնեցաւ նոյնիսկ մի տղէտ, թշուառ, զատարկուղեղ եպիսկոպոսի հայրապետական թեկնածու առաջարկել հայոց ազգին, և այդ այն մարդիկ, որոնք Մակար սրբազնի կաթողիկոսութեանը հակառակ էին: Ազգի չարատանջ, համբերատար ուսերի վրայ մի տըգէտ գլուխ դնելու ցանկութիւնը լոկ նրա համար, որ գլուխը խաղալիք գառնայ ընարողների ձեռքում, հոգու անկախութիւն չունենայ, ամենադատապարտելի գործն է, մեղքերից մեղսագոյնը:

Այս նպատակին համնելու համար հակառակորդների գէմ անարդ գէնքեր գործածուեցան:

աքսորանք, բանդ, անուանարկութիւն և հազար ու մի խաղը ու խայտառակութիւն բնորոշեցին Տեղակ սլուժենան շրջանը և ազգի ու եկեղեցու իրաւանց մի քանիսի կորստեան պատճառ եղան:

Ծանրագոյն եղաւ պատուհասը, վասն զի սուրբ զործին անսուրբ սրտով էին մերձեցել հայ ազգի անարժան որդիք:

Սակայն արդարութեան այս գասն էլ խրատ չեղաւ անխրատ ազգին:

Մերձեցան նոր հայրապետի ընտրութեան օրերը: Մամուլի մի մասը ո. էջմիածնի մի դաս կրօնաւորների հետ միացած, իւր թիկունքն ունենալով իշխանութեան տիրող հայեացքները, ամեն ջանք գործ դրաւ ո. էջմիածնի երկու եպիսկոպոսներից մինին կաթողիկոսացնել: Իսկ երբ անվայել ջանքերը խորտակուեցան, սրանց բանակը Խրիմեան սրբազնի թեկնածութիւնը յուռաջ մղեց այն բաղը, բայց ոչ անապական յուսովը, թէ նա իրեկ թոյլ բնաւորութեան տէր և ծեր մարդ, գոնէ իրենց կուսակցութեան ձեռքին կը մնայ, իրենք անձնական բարօրութիւն խոստացող տեղեր կը դրաւեն ու իրապէս հայրապետութիւն կանեն: Այս յետին միտքը ծածկուեցաւ ազգի աչքից նրանով, որ Խրիմեանը մեծ ժողովրդականութիւն ունէր, ուրեմն նրա թեկնածութիւն պաշտպանելն էլ կը շոյէր ժողովրդին և կը բարձրացնէր նրա աչքում պատպանող կու-

սակցութեան անունը: Այս կուսակցութիւնը, որ 69 ամեայ Մակար սրբազնին ծեր էր համարում և բողոքում էր նրա ընտրութեան դէմ, 74 ամեայ Խրիմեան սրբազնին ծեր չէր համարում: Կուսակցական հաշիւներով կոյք բարողիչներն էլ չէին ուղղում աչք բանալ ու Խրիմեանի վանահայրութեան, պատրիարքութեան օրերի վարչական թերութիւնը տեսնել, որոնցով հայրապետական գահ բարձրանալն առնուազն բարեբեր չէր կարող լինել:

Մի ուրիշ առաւել երիտասարդ կուսակցութիւն Խրիմեանի թեկնածութիւնը պաշտպանում էր դարձեալ նեղ կուսակցական տեսակէտից:

Խրիմեանը յեղափոխականի հոչակ ունէր (միայն հոչակ): Սրանց պէտք էր լոկ յեղափոխական Խրիմեան: Մոռացան թէ հայրապետ են ընտրում, որ համայն ազգի լուսակցութիւնն իւր մէջ պիտի ամփոփէ և կամեցան հայրապետին իւր վսեմ բարձրութիւնից իջեցնել ու մի կուսակցութեան գլուխ կամ պետ դարձնել: Այս միտումով բուռն միջոցներ գործ դրուեցան Խրիմեանի կաթողիկոսութիւնը յաջողեցնելու:

Մի այլ բաժին կար պատղամաւորութեան մէջ, մի մեծ բազմութիւն գլխաւորապէս Տաճկաստանից եկած պատղամաւորների, որոնք քաջանաշելով Խրիմեանին իրեւ վարչական շնորհաց մէջ տկար մարդու, հոգով հակառակ էին

Նրանք Ալ ազգի անունով բղաւող զօրեղ կուսակցութիւններից ստիպեալ, իրենց անձն ու անունը ժողովրդի կարծեցեալ արհամարհանքից ազատ պահելու միտումով, իրենց կոչման բարձրութիւնից վար իջնելով տեղի տուին, իրենց խղճի ձայնը խեղգելով՝ ճշմարտութիւնը զոհ բերին, համակերպեցան ամբոխին և Խրիմեանը միաձայն կաթողիկոս ընտրուեցաւ:

Այս ընտրութեան մէջն էլ անձնական և կուսակցական հայեացքներն ու շահը սուրբ գործն անսուրբ դարձուցին. ճշմարտութիւնն ու իրական ազգասիրութիւնը ամբոխին յանձնուեցաւ խաչելու համար և արդարութեան անշեղ օրէնքը դառնապէս պատուհասեց ազգն ու եկեղեցին:

Այդ պատուհասի կոկծից այժմ հէնց նրանք են առաւել հառաջում, որոնք ըստ երկոյթին ոգեսրուած էին Խրիմեանի ընտրութեամբ:

Արդարութեան օրէնքը չմոռացաւ նաև նրան, որ 74 տարեկան հասակում ծերութեան մոլորութեամբ յանձն առաւ կաթողիկոս լինել, վարչական մեծ մարդու դերն ստանձնել: Հայրապետական թերութեանց փոշին թանձրապէս նըստաւ նրա փառաւոր, փանտաստիկական անցետի վրայ: Նա՝ որ անթերի ու կատարեալն էր հոչակուած որպէս աննման բանաստեղծ, մեծ

քարոզիչ, փիլիսոփայ և կատարեալ, պատմութեան մէջ թողաւ մի խոշոր սխալանք:

«Աստուած սարը կը տեսնի, ծիւնը կը դնի:» Սարի համեմատ էլ ձիւնը կը լինի: Քանի բարձր է անարդարութեան սարը, այնքան էլ առատ, խորունկ և տեական է սառցէ կապանքներով կարկամող պատուհաս— ձիւնը:

Սրդեօր կը խրատուիս, հայ ազգ, ծանրագոյն պատուհասներով լեցուն տառապեալ եկեղեցի, թէ գալիք ընարութեանն էլ անսուրբ սրտով սուրբ գործին կը մօտենաս, անարժանին, անյարմարին, տգէտին, յետամնացին, կուսակցականին կը գրկես ու Մեծ Լուսաւորչի Աթոռի վրայ կը բազմեցնես, որպէսզի առաւել պատժապարտ դառնաս հատուցանող արդարութեան առաջ:

Վ Ազժանիրի յատկանիշեսը.

Հայոց Առաքելական և եկեղեցու թափուր, սկասքօղեալ հայրապետական գահի համար գահակալ պէտք է ընտրել:

Ամենայն ոք, որ իւր հայկական ծագմամբ չէ ամաչում և իւր հայ անուամբ ու ազգային գիտակցութեամբ է պարծենում, արժանաւորագունի ընտրութիւնը ս. Լուսաւորչի Աթոռի համար իւր որտին մօտիկ պիտի ընդունէ, իւր

նուիրական ցանկութիւններից անդրանիկը պիտի ճանաչէ:

Այս այսպէս լինելուց յետոյ, իւրաքանչիւր նման հայ անգոսնելի անտարբերութիւնը պիտի մի կողմ նետէ. իւր մտքերի ու խորհրդածութիւնների մաքրութեամբը, ազգասէր զգացմանց ջերմութեամբը հանդէս պիտի գայ՝ Սատուծոյ օրհնութեանն ապաւինելով և իւրովսանն պիտի նպաստէ, որ հայրապետական Աթոռի վրայ արժանընտիր գահակալ բազմի:

Դործունէութեան իւրաքանչիւր ասպարէզ, իւրաքանչիւր կոչումն իրեն յատուկ բնածին ու ստացական յարմարութիւններն է պահանջում։ Հայրապետական գերագոյն կոչումն այդ կանոնից դուրս լինել չի կարող։

Հայրապետացուն պէտք է իւր հոգեսր գէնքերով կազմ և պատրաստ հանդէս գայ «հայելովի Զօրագլուխն հաւատոյ»։ Հայրապետական զինուց կամ յատկանշից պահանջն ու արժէքը կիմանանք, երբ հայրապետի պաշտօնի ընդարձակութիւնն ու ծաւալն ըմբռնենք։

Ա. Հայոց Հայրապետը հայոց ազգի լրումն է. այսինքն ամփոփում է իւր մէջը համայն ազգի կրօնական, բարոյական և մասամբ քաղաքական պահանջները։ Այդ իմաստով նա ազգի իրաւանց և պարտուց տէրն է։ Զինքն ընտրող ազգի կրօնական և պատմական իրաւունքով

զրահաւորեալ՝ նա ազգն պաշտպանելու պարտականութիւնն ունի. պաշտպանութիւն ըստ բարոյականին, կրօնականին, մտաւորականին և մասամբ՝ քաղաքականին։

Կաթողիկոսի այդ էական նշանակութիւնը շեշտելու համար նրան «իշխան», թագաւոր» և նման տիտղոսներ չեն տուել, այլ «այլը» միայն։ Ապա ուրեմն ազգի և կաթողիկոսի յարաբերութիւնը նման է ընտանիքի անդամների և նրա հօր՝ գլուխ մէջ եղած յարաբերութեանը։ Վարից պատկառանք և ազատ, անբոնազբան անձնուիրութիւն, վերից համատարած, ազատ սէր բնորոշում են տան և այն գլխի յարաբերութիւնը, որի անունով տունը, ընտանիքն է ճանաչւում։

Նման յարաբերութիւնը բացասում է կուսակցական անյարիր ոգին հայրապետի մէջ։ Հայրը չի կարող խսրական աշքով նայել իւր զաւակաց և ատելութեամբ առ ոմանս. երբ նա զաւակները խտրեց, այլես նա ընդհանուր հայր չէ, այլ հակամէտ մի կողմ, ուրեմն կուսակցական։ Իսկ երբ հայրը, հայրապետը կուսակցական է, նա այլես լրումն չէ մի ընտանիքի, մի ազգի, այլ գլուխ մի կուսակցութեան, մի հատուածի, ուստի և անյարիր իւր կոչման։ Ճշմարիտ մեծութիւնը մի կուսակցութեան պատկանել չի կարող։

Ապա ուրեմն հայոց ազգի ընտրելի հայրա-

պետի անդրանիկ յատկանիշն է կուսակցական չլինել:

Բ. Հայրապետը քրիստոնեայ ազգի և քրիստոնէական եկեղեցու երկրաւոր գլուխն է, Յիսուսի աշակերտը, Նրա ս. Աւետարանի ուխտաւորը, Նրա լուսապայծառ գաղափարների աւագմատակարարն իւր ազգին: Վսեմ գաղափարներն այն ժամանակ միայն վրկարար են, հրաշագործ, կենդանարար, մնուցիչ, երբ նրանք մատակարաւում են զօրեղ հաւատով եւ վարակիչ ոգեւորութեամբ: Հայրապետը կոչւած է իւր ազգի քրիստոնէական դաստիարակութեան գլուխ կանգնելու: Իսկ ամենայն դաստիարակութիւն դաստիարակից զօրեղ հաւատ է պահանջում գէպի իւր վարդապետութիւնը:

Հայրապետի հոգու աչքը միշտ յառած պիտի մնայ գէպի հաւատոյ Զօրապլուխը: Հաւատն է փրկում: Ուղիղ է, ըստ առաքելոյն «Հաւատք առանց գործոց մեռեալ են», բայց առանց հաւատի էլ գործն է անըմբոնելի: Իսկական բանաստեղծներ, հանձարեղ բաղաքագէտներ, ըմբոստ հռետորներ, ազգեցիկ հրապարակախօմներ, քանըարաւոր զօրափարներ նախ և առաջ հաւատով են սովորագինւած: Նրանք ոչինչ կը լինէին, եթէ ոգեստութեան շանթարձակ զօրութիւն չլինէր իրենց մէջ. իսկ ոգեստութիւնն առանց

հաւատի ըմբոնելի չէ, կամ կեղծ է, կարճաժամանակեայ, ապարդիւն:

Հաւատքը ոչոքի այնպէս չի սազում, ոչոքի այնպէս չի փայլեցնում, որչափ քրիստոնեայ եկեղեցու հայրապետին: Նա պիտի հաւատայ և Աւետարանի գաղափարների բացարձակ ճշմարտութեանը, ինչ տեսակէտից էլ որ մեկնելու լինի դայնս: Նրա զօրեղ հաւատի բորբոք լսոյսը ստորագրեալ եկեղեցականների միջով, որպէս լուսաբեկ ատակու միջով պիտի բեկբեկւի, գունաւորուի և հաւատացեալ ժողովրդի սիրտն էլ վառէ իւր ջերմութեամբ: Այդ հաւատը ամենազօրեղ կապը կը լինի ազգի և եկեղեցու մէջը, որդոց և հարց մէջ. այդ հաւատը յաղթող հրեղէն սուրն է հայրապետի և իւր հոգեոր գինւորների ձեռքում. «Զի որ յաղթէն աշխարհի հաւատքն մեր»:

Ապա ուրեմն Հայրապետի երկրորդ յատկանիշն է հաւատով հզօր լինել:

Գ. Ազգաց և կրօնների պատմութեան բազմաթիւ փաստերն ու վկայութիւնները հաստատում են թէ՝ միայն այն մարդու գաղափարներն են արմատ բռնում, աճում և պազարեր դառնալով աշխարհի քիմքը յառաջխազացութեամբ, նորոգութեամբ պարարում, որոնց խօսքի և գործի մէջ ներդաշնակութիւն կայ: Երբ գործը խօսքին համեմատ չէ, գործիչն է որպէս «Ճնծդայ, որ զօղանջէ». և այդ զօղանջը ունկնդիրնե-

րի ականջին դիպչելով սահում անցնում է, առանց նրանց սիրտը մտնելու:

Խօսքի և գործի զուսպ ներդաշնակութեամբ է բնորոշում Փրկչի կեանքն ու Աւետարանը. Նա նախ առնէր և ապա ուսուցանէր: Եւ այդ ներդաշնակութիւնը յաղթեց աշխարհին:

Ոչոքի գուցէ այնքան աւելի սազական չէ խօսքի և գործի ներդաշնակութիւնը, որչափ Յիսուսի և Աւետարանի ուխտաւորին՝ Հայոց Հայրապետին: Բարձր հեղինակութեան գաղտնիքն այդ ներդաշնակութեան մէջն է: Իսկ հեղինակութիւնը այն բարոյական մեծ ոյժն է, որի առջև ամէնքն առանց բռնութեան ու սիրով խոնարհում են: Այլապէս հայրապետի հրաւերը ոչ ոքի չի հրապուրի, նրա սրբատառ կոնդակները, հովուական ընդհանրականները կը դառնան հասարակ թղթեր, նրա ձայնը ազգի սիրտը չի մըտնի և այնտեղից արձագանք չի քաշի:

Ապա ուրեմն հայրապետի լաւագոյն յատկանիշներից մինը պէտք է լինի խօսքի եւ գործի ներդաշնակութիւն այսինքն՝ ազնութիւն:

Դ. Խօսքի և գործի ներդաշնակութիւնը կամ ազնութիւնը բղխում է կամ զօրեղ հաւատից կամ խորունկ գիտակցութիւնից և կամ միաժամանակ թէ մէկից և թէ միւսից:

Ճշմարիտ հաւատաւորը չի կարող իւր էութիւնը կազմող երկիւղածութեանը կամ բարե-

պաշտութեանը հակառակ գործ բռնել. Նա չի կարող նաև չարդիւնաւորել իւր հաւատը գործով: Նա կատարում է միայն այն, ինչ որ իւր հաւատին, դաւանանքին հակառակ չէ, այլ համապատասխան: Նա չի կարող զգալ այլ կերպ, կամենալ, կամքով արտայատել, այլ կերպ: Զորօր. «Քրիստոնեայ հաւատաւորը, որ զգացմունքով ըմբռնում է, թէ ողորմածութիւնը հոգու փրկութեան ճանապարհներից մինն է, չի կարող իւրովսանն չօգնել աղքատին, անանկին և որ առաւելն է, նա չի կարող աղքատի ու տընանկի, որբի և այրու հացը խլել:

Հաւատն անգործնական լինել չի կարող. գործը ճշմարիտ, անկեղծ հաւատի անբաժան հետեանքն է: Ուստի ճշմարիտ հաւատաւորը ինչ որ զգում է, այն էլ կամենում է, կարենում է. Նա հաստատակամ է:

Մեզ համար ըմբռնելի չէ, որ բուռն կերպով զգացող մարդը, այսինքն հաւատացողը, սիրողը, գթացողը, յուսացողը և այլն իւր հաւատը գործով չարդիւնաւորէ, ինչպէս որ ըմբռնելի չէ մեզ համար մի սիրող մայր, որ իւր զաւակին վտանգից ազատելու համար, ինքնիրեն վտանգի չենթարկէ, մի հայրենասէր զօրավար, որ պատերազմի գաշտիցը փախչի, մի կրօնաւոր որ անպաշտական թողնի իւր տաճար, մի հովիւ իւր հօտ. Որ որ կասէ. թէ զօրեղապէս հաւատում է,

բայց կամքով թոյլ է ու անկարող իւր զգացածն իրագործել սուտ է ասում, մի հաւատաք. այդ նշանակում է հաւատն է թոյլ նրա մէջ: Հաստատակամութիւնը որպէս վաւերացումն ազնուվթեան, ինչպէս ասացինք, բղխում է նաև գիտակցութիւնից:

Ինչոր հաւատով մարդն ըմբռնում է զգացմունքով, նոյնը խորունկ գիտակցութեան տէր մարդն ըմբռնում է մտքով, տրամաբանական մտածողութեամբ: Գիտակիցը կամ իմաստունը առաջնորդում է ճշմարտութեան դադափարով. այս նրա էութիւնն է, մարմնացեալ բնագդն է, որին հակառակ ընթանալ նա չի կարող: Ճշմարտութիւնը նախ և առաջ մտքի և իրականութեան ներդաշնակութիւնն է, ապա խօսքի և մտքի ներդաշնակութիւնն է: Երբ այս ներքին ներդաշնակութիւնը կայ իսկապէս գիտակցողի հոգու մէջ, նա չի կարող թոյլ տալ, որ նախ ինքը ճշմարտութեանը հակառակ ընթանայ, ապա չի կարող թոյլ տալ, որ ուրիշները ճշմարտութեան հակառակ ընթանան: Ուստի և գիտակցող, խորունկ գիտակցող մարդը, որ ըմբռնում է երեւոյթներն իրենց իսկական պատճառներով, չի կարող կամազուրկ լինել, գործով շարդիւնաւորել իւր գիտակցութիւնը, ճշմարտութիւնը: Նա անպայման հաստատակաւ է:

Ով որ միամիտներին հաւատացնել է փոր-

ձում, թէ ինքը կամ այս ինչը շատ իմաստուն են, գիտակից են ճշմարտութեան, բայց կամքով թոյլ են ու չեն կարողանում գործով արդիւնաւորել իրենց փայլուն գաղափարները, նա սուտ է ասում. այդ նշանակում է, թէ ճշմարտութիւնը նրա համար դաւանանք չէ, մարմին և արիւն դարձած չէ, խորունկ գիտակցութիւն չէ, որի վրայ իմաստունը մեռնել խսկ պատրաստ է:

Արդ, զգալ չերմութեամբ, գիտակցել խորապէս և ըստ այսմ կամենալ՝ կարենալ, կատարեալ մարդու յատկանիշն է: Այդ է ընաւորութիւնը, հաստատակամութիւնը մարդու:

Հայոց հայրապետը կոչւած է մի ամբողջ ազգի հոգին առաջնորդող ղեկավարը լինելու: Ազգի անհատները տարբեր կերպով են զգում, տարբեր զիտակցում, տարբեր կամենում: Հոսանք հոսանքի հակառակ է ընթանում, կամքերն իրար բաղիւում են ու մէկ մէկով խորտակում: Հայրապետի կամքն ամենէն անվկանողը, հաստատունը պիտի լինի անշարժ ժայռի նման, որի վրայ փշրուեն այն բոլոր կամքերի ալիքները, որոնք չերմ հաւատից և պայծառ գիտակցութիւնից չեն բղխում: Հայրապետի կամքը այն լայնատարած գետը պիտի լինի, որ իւր մարմանդ ու հզօր ծոցն ընդունէ ու հետը տանի մնացեալ կամքերն՝ որպէս վտակներ:

Կամազուրկ հայրապետը ամենայն հողմից

շարժւող, ամենայն ազգեցութիւնից դողացող մի եղկելի էակ է, որ կարող է խաղալիք դառնալ շրջապատի ձեռքում։ Իսկ կամազուրկ հայրապետը միշտ իւր շուրջն է հաւաքում սինլքոր, շուղոքոթ, պորտաբոյծ, վատասիրտ արանց, որոնք իրենց էութեամբ ու մերձաւորութեամբ արատն են հայրապետութեան, անէծքն՝ ազգի գլխին։

Մեր հայրապետը պէտք է հաստատակամ լինի և որպէս մարմնացեալ ընաւորութիւն լեռնայ հայ ազգի առաջ որպէս փառք, օտարների առաջ որպէս պատկառանք։

VI. Արժանիքի յատկանիշերը

Ե. Բնաւորութեան զօրութիւնը՝ ասացինք, խորունկ գիտակցութեան վրայ է հիմնուած։ Իսկ գիտակցութիւնը, մտքի պայծառութիւնը, թափանցողականութիւնը զօրանում, սրւում, կատարեալ և յաղթական է դառնում ուսման միջոցով։

Կեանքը լոյս է, անթափանց խաւարում միայն մահն է թագաւորում։ Այս յաւիտենական օրէնքին միայն Փիսկիքական աշխարհը չի ենթարկւում, այլ և հոգեկան աշխարհը։

Եթէ մի անհատի, մի ազգի գլխում հանգած է, կամ դեռ վառուած չէ Մտքի լապտերը՝ նա երկար ճանապարհ կտրել չի կարող. նա իւր ու-

ղին տեսնել չի կարող և ոչ երկուստեք վիստացող վտանգներից խուսափել կարող է։ Ուստի խաւարի մէջ խարխափելով՝ նա կամ պիտի ուղիղ ճանապարհիցը շեղուի ու որևէ է անդունդի մէջ գտնի իւր գերեզմանը և կամ՝ որսորդահալած դառնալով, մտքով լուսալայծառ ազգերի շեշտակի նետովը խոցուի, որպէս ամերիկական մէկ յետամնաց Հնդիկ սպանական հրազդններու առաջ։

Կեանքը խաւար չի ընդունում. Հոգու լոյսը, մտքի ճաճանչաւորութիւնը նրա միակ ու բացարձակ օրէնքն է։

Լուսաւոր Մտքից հզօր բան չկայ աշխարհում։ Նա յաղթական է. ժամանակի և Տարածութեան վրայ. Նա թափանցում է հին-հին ժամանակների ծոցը, Նա շրջում է բիւրաւոր աշխարհներով՝ աստղերով լեցուն Տիեզերքի վրայ. Նա մի շերտ շողով հարիւրաւոր տարիների կըտրելիք ճանապարհը տեսնում, գծում է Ապագայի դաշտերով։ Նա Ներկայի ամենազօր ճարտարապետն է. խորտակելով ամենայն՝ ինչ որ հին է, մաշուած, ցնցուաի, Նա Անցեալից ջոկում է միայն կենսականը, Ներկայից՝ թարմը, Ապագայից՝ նորը, կախարդականը և իւր նորաձեւ կառուցումներն է անում։

Ո՞չ զէն ու զօրք, ո՞չ փառք, ո՞չ թագաւոր, ո՞չ իշխան, ո՞չ հաստատութիւն, ո՞չ ոսկի ու ար-

ծաթ, ոչ կրօնք ու եկեղեցի, ոչինչ, ոչինչ չի դիմանայ լուսաւոր Մտքի առաջ, այլ կհալուի, կհոսի, կխորտակուի ամենայն ինչ նրա շամփրումից, նրա ահեղ բաղխումից, ինչոր լուսաւոր Միտք չէ:

Լուսաւոր Միտքն Աստուած է և նրա Հոգին է, որ ըրջում է Քառոսի վրայ Արարչագործութեան տենչով տոգորուած:

Հայ ազգը իւր համայն էութեամբ, իւր հոգու բոլոր ընդարձակութեամբ իւր խնկանուէր զգացմունքներով պիտի ի գուճ զայ լուսաւոր Մտքի առաջ, պիտի իւր հոգու լապտերը վառէ Մտքի ընդարձակ խարոյկից, որ ապրի, որ չըմեռնի ու թաղուի խաւար մոռացութեան ծոցում:

Իոկ գիտութիւնը Մտքի լապտերի մէջ լեցւող իւղն է: Առանց գիտութեան, զարգացման իւղի, Մտքի լապտերը մշտավառ չի լինի, այլ առկայժող մի ճրագ, հանգչելու վտանգով բռնուած:

Արդ, եթէ լուսաւոր Միտք, պայծառ տեսութիւն կեանքի Օրինաց պահանջն է հայ ազգից և նրա ամեն մի անհատից, ակներև է թէ այդ ազգի Գլուխը՝ Հայրապետը, որ կոչուած է իւր խնամոցը յանձնուած ազգի Հոգու առաջնորդը լինելու, ուահահորդը՝ գէպի կատարելութիւն, չի կարող լուսաւոր Միտք չունենալ, անզարգացած. տգէտ լինել: Նրա մտքի լոյսը որպէս փարոս պիտի փայլի կեանքի աղօտ ծովի հեռաւոր ափում,

ուր յառած մնան նաւողների աչքերը, ուր ուղղութիւն բռնէ զէկը նաւի:

Ո՞րչափ անմիտ, Բնական Օրինաց հակառակ, խաւարի և մահուան դաշնակցութիւն է, երբ Հայոց հայրապետը մտքի լուսով տկար, ժամանակակից գիտութեան մէջ յետամնաց ու թերի է. Նա՝ որ կոչուած է եկեղեցու քարոզիչներին ուղղութիւն տալու, Հայ ազգի բարձրագոյն միջնակարգ և ստորին վարժարանները ղեկավարելու, լուսաւոր ազգերից Պոոմէթէոսի ոգևորութեամբ լոյս—կրակ գողանալու և իւր հօտի մէջ սփոելու համար:

Բարձրեալն Աստուած հեռու պահէ մեր սիրական ազգին տգէտ, ժամանակակից բարձր ուսումից զուրկ, մտքի լուսաւորութեանը հակառակ ու նրանից երկնչող Հայրապետից: Այդպիսի Հայրապետը Հայոց թշուառ եկեղեցու վերջնական անկրամն է: Ժամանակն այլ ես չի հանդուրժի տգէտ կաթողիկոսի:

Ուստի, հայ ազգ, քո ընտրելոյդ յատկանիշերից գերազանցը պիտի լինի Մտքի լուսաւորութիւն, որ ժամանակակից ըարծը ուամամը է պայծառացած:

Իսկ մշտական սրտառուչ աղօթքը՝ իմաստուն մարգարէի աղօթքը. «Լոյս տուր, Տէր, աշաց իմոց, զի մի երբէք ննջեցից ի մահ:

Զ. Սակայն որքան և առատ լինի իւղը կան-

թեղի, եթէ հնութիւնից գեղնած, մաշւած կամ ճաքած կանթեղը մարում է, եթէ պատրոյկը հինցած ու փթած է, նրա լոյսն անբաւարար է մի ընդարձակ տարածութիւն ողողելու համար, նրա դալկացած, մահատիպ պլալոցը հանգչելու նշան է: Ապա ուրեմն պայծառ, արկշող լոյս ունենալու համար անօթը պէտք է նոր, ջինջ, յըստակ լինի, պատրոյկը՝ թարմ:

Աշխարհիս վրայ ամենայն թարմութիւն թօշնում է ժամանակի շնչով, ամենայն ծաղիկ թարշամում, ամենայն ծառ փառում, ամենայն շունչ ու կենդանի հետզհետէ յետ ընկնում, նուազում, հնանում է:

Մարդն էլ հնանում է հարկաւ: Մարդու ֆիղիքական աճելութեանը գիտակ անձը բաջածանօթ է թէ՝ մարդու մարմինն իւր մանկութեան ժամանակ դալար ու թոյլ ընձիւղ մ է մեծ ծառի արմատին բուսած: Նա իւր պատանեկան հասակում բարձրուղէշ ենում է դէպի վեր ջահիլ բարդու նման, առանց ոստերի, ինչպէս մի սիրուն շիւ, նազանքով ճօճացող հովերու առաջ: Երիտասարդական հասակում նա իւր հպարտ ճակատը, իւր գանգրահեր պլուխը՝ պտղաբերութեան անդրանիկ ծաղկով զարդարած ծառի նման, դէմ է անում երկնքի արկին ու անձրեին, հովին ու հողմին, կենսունակութեան, ոյժի, եռանգի բոլոր նշաններով: Այրու-

թեան հասակում նա նման է ճիւղատարած, բազմատերև, լայնանիստ ծառին, որ տերելներով պտուղներն է զրկած:

Ծերութեան հասակում նա նման է հինցած ծառի, որ մերկացել է իւր ծաղիկն ու տերեւ, պտուղն ու ոստեր. որի գանգացած լերկ գլուխը հետզհետէ դէպի հողն է խոնարհուում, իսկ փտած արմատում որդն է աշխատում:

Մարդու հոգու աճելութեանը գիտակ անձիցն էլ ծածուկ չէ, որ ֆիղիքական բնութեանը համապատաշած է հոգեկան կարողութեանց վիճակը: Մանկական հասակում ձեերն ու գոյներն են մանկան հոգին հետաքրքրող: Պատանեկականի մէջ, տիրողը վառ երևակայութիւնն է, որ փըռուումէ ֆանտաստիկ երևոյթների վրայ, որ ցնորքներն է զարդարում: Երիտասարդականի մէջ բղխում է սիրոյ մաքուր ձգտութների, կենդանի հետաքրքրութեան, գիտութեան, փիլիսոփայութեան, անձնազոհ գործունէութեան աղբիւրը, որ եռանգի անեղ թափով հոսում է դէպի յառաջ: Այրութեան մէջ փառասիրութեան, հոչակի ծարաւով պապակում է մարդու սիրտն ու լեզուն, զօրանում է փորձառութիւնը, աւելանում եսականութիւնը, մտքի թուիչքը համնում է այն ահեղ բարձրութեանը, որ երիտասարդական անփորձ բայց մաքուր իդէալներն էին բազմած մի փոքր առաջ: Այրութեան հասակի վախճանական

կէտից սկիզբն է առնում ծերութիւնը, որի մէջ հետզհետէ ուժաթափի ծերունին հանում է իւր վրայից փառքի ծիրանին, մտքի պայծառութիւնը. դաղար առնում եռանդի թափը, հանգչում երևակայութեան կայծը: Եւ ծերութեանը բաժին է միում միայն աղօտ յիշողութիւններ անցեալից, տիրում է նրան «Ունայնութիւն ունայնութեանցը», մահու անսփոփանք ակնկալութիւնը և վերանորոգութեան մի աղօտ յոյս մի այլ աշխարհում:

Հասկանալի է ուրեմն թէ կեանքի անիւր թափով թաւալող հասակներն են եռանդոտ երիտասարդութիւնն ու հեռատես, փորձառու այրութիւնը, որից դեռ չէ հեռացել եռանդը, աշխոյժն ու աւիւն:

Արդ, մեր բերած օրինակի խօսքերով պիտի եզրակացնենք թէ՝ որպես զի կանթեղը բոցավու լինի, բաւական չէ իւղի ազնւութիւնը, այլ պէտք է նաև նոր կանթեղ, թարմ պատրոյի:

Թըչափ և Հայրապետը գիտութեան լոյս շտեմարանած լինի իւր մէջ, այնումենայնիւ այդ լոյսը գրուանի տակ թաքցրած ճրագի կնմանի, եթէ Հայրապետը ծեր է, հինցած, մարմնով իւախտեալ, եռանդից թափուր:

Չէ, այդպիսի հայրապետից, ծեր հայրապետից օգուտ չկայ, այլ լոկ վնաս միայն: Ի՞նչ օգուտ պատերազմի դաշտն ելած հմուտ զօրավա-

րից, որի ձեռքերն անզօր են նիզակ ճօճել, վահան բռնել, անձնական օրինակով ոգեորել զօրքը, որի աչքը տկար է թշնամու հնարքները տեսնելու համար:

Չէ, հայ աղգ՝ յուշ լիցի քեզ ծերութեան օրերումն ընտրուած քո սակաւակեաց հայրապետ ներիդ թողած աւերն ու սրտաբեկութիւնը յուշ լիցի քեզ: Հեռու հանզօր ծերութիւնից. քեզ երիտասարդ, այրութեան հասակը նոր թեակոխած հայրապետ է պէտք:

Հեռու քեզնից ծերոց անմիտ առարկութիւնը, թէ իմաստութիւնը միայն ծերութեան մէջն է: Հեռու հանգուցեալ ծերունու հնաւուրց խօսքը թէ. «մօրուքին նայելու է, թէ ձերմակ մաղ կայ»: «Ալիք մարդոյ՝ իմաստութիւն իւր» ասել է Ճշմարիտ իմաստունը: Ով իմաստութիւն, գիտութիւն, շնորհք, եռանդ ունի, նա՝ թէկ երիտասարդ՝ բայց աշխարհի փորձառութիւնն ունի: Մեր երջանիկ հայրապետաց շարքին մէջ ամենէն բեղմնաւորը երիտասարդ հայրապետներն են եղել, որոնք 30—40 տարի աղգ ու եկեղեցի են կառավարել:

Թողէք հանգիստ առնի հայ աղգը իրար ետեից ծերունի հայրապետներ թաղելուց, անիշխանութեան կործանիչ շրջաններ քովէքով շարելուց: 30—40 տարի հայրապետութիւն անելու մի հասակ ընտրեցէք, որպէս զի իրար ե-

տեից հայրապետ դառնալու անմիտ տենչը, որ յետին ժամանակներս այնչափ վարակիչ է դարձել, հանգչի, մեռնի մեր ծերունի եպիսկոպոսներու մէջ, որք «զանձինս ընծայեցուցանեն», որոնք ուզում են անպատճառ հայրապետ մեռնել:

Հայ ազգ, քո հայրապետիդ մի յատկանիշը երիտասարդութիւնը պիտի լինի:

VI I. Արժանիքի յատկանիշերը

Է. Յայս վայր մեր շարած յատկանիշերը սանդուղքի վարի աստիճաններն են, որոնց վրայով Հայրապետը բարձրանում է գէպի իւր փառապանծ գահը: Իսկ գահի վրայ նա սկսում է փայլիլ իւր իսկական փայլով, որ կոչում է վարչական շնորհը կամ քաջ հովութիւն:

Այս յատկանշի վրայ մենք մի փոքր երկար կանգ կառնենք:

«Հանձարները ծնւում են» հին ասացուածք է: Կանոնաւոր ուսումը, զարգացումը աճեցնող անձրւն է, ջեռուցանող արփին է այն սաղմի, որ ի ծնէ դրուած է հանձարեղի հոգու մէջ: Ցիրաւի առանց գիտութեան լուսոյ այդ սաղմը չի զօրանայ, բայց այն էլ ճշմարիտ է, թէ գիտութիւնն ու արուեստը հանձարեղ չեն դարձնի մարդու, եթէ Ցիրական Շնորհաց սաղմը ի բնէ

չկայ նրա հոգու մէջ: Երբ այս երկուքը միասին են, այս ժամանակ մարդը հանձարեղ է:

Հանձարը ուր էլ լինի՝ հանձար է: Հանձարեղ բանաստեղծը ծովերի վրայ արշաւող ալիքները գիտելիս, թէ նրանց ջինջ հայելու մէջ նայելիս. լերանց բարձունքներու վրայ վաղ առաւօտու վարդագոյն շողի ու ցօղի համբոյը դիտելիս, թէ լուսնկայ խաղաղ գիշերւայ զեփիւոփի ու տերեների շշունչը լրտեսելիս. դոռ մարտի գաշտի արեան ճապաղիքի դիմաց, թէ յաղթական փողերու ձայների առաջ, ամենուրեք բանաստեղծ է, հանձար է: Բնութեան ու կեանքի զօրեղ երևոյթները, խորհրդաւորութիւնը, մարդկային կըքերի բաղխումը խորապէս տպաւում են իրենց մեկին ու իսկական գոյներով բանաստեղծի հոգու վրայ, իբրև զեփիւոփի թև հպում են նրա քննար սրափ լարերին, ուսկից մենք աղու, սրտայնյդ մեղեղին ենք լսում եռացող յուզմունքից արտապ:

Հանձարեղ զերասանը՝ որի հոգեկան աշխարհը արձագանքներ ժողովող և թափով ցրւող անդնդախոր ձորերու կնմանի, մարդկային զօրեղ կըքերի մաքառումները վերարտադրելիս՝ ամենայն տեղ, ամենայն բեմի վրայ, ամենայն ժողովրդի առաջ հանձար է:

Հանձարեղ զօրավարը՝ գիցուք մի Յուլիսս կեսար, մի Աննիբալ, մի Աղէքսանդր Մակեդո-

նացի, Գաղղիոյ դաշտերու վրայ թէ Յլպեան սարերի լանջերին, Բալքանի հովիտներում թէ Պարսկաստանի ու Հնդկաստանի տպաներում ու անապատներում պատերազմելիս, հանճարէ նա ամենուրեք:

Հանճարեղ հռետորը կրթական ամբիոնների թէ տաճարի բեմի վրայ, դատարանի դահլիճում թէ պատերազմի դաշտում, հերոսի փառաց թէ նահատակի դագաղի առաջ, հանճարէ նա ամենուրեք: Եւ այն...

Այդպիսի հանճարեղութիւն է նաև վարչական շնորհաց ունակութիւննը:

Հանճարեղ վարիչը, կամ կառավարիչը, դեկավարը նոյնչափ յարգանաց, երկրպագութեան արժանի է, որչափ միւս հանճարեղները, եթէ ոչ աւելի:

Նոյն իսկ աւելի ենք ասում, վասնզի հանճարեղ վարիչը քանքարաւոր մշակողն է այն հողի, որի վրայ միւս հանճարներն են աճում: Պէրիկլէսի դարու հանճարները չէին լինի, եթէ Պէրիկլէսի նման հանճարեղ վարիչ չլինէր: Հայոց աշխարհում ոչ թարգմանչաց շնաշխարհիկ խումբը կլինէր, ոչ ոսկէղինիկ գրականութիւն, ոչ վարդանանց պատերազմ ու վարդանանք՝ եթէ Ս Սահակ Պարթեի և Վամշապուհ արքայի հանճարը չը բոցավառուէր հայոց արքունիքում և Հայրապետական Աթոռի

վրայ: Ոչ Օյեամա, ոչ Տօղօ, ոչ Կուրօկի, ոչ Նօգի, ոչ Նօձու կը լինէին այսօր ճապոնական կեանքում, որոնք, Մագող Արեգական աշխարհը փառքով պսակեցին, եթէ Մուցցիխիտո թագաւորի շնորհաց լապտերը 40 տարի շարունակ կախուած չլինէր Ճապօնիայի վրայ:

Շնորհալի վարիչը միւս հանճարներու նման իւր հետն աշխարհ է բերում հանճարեղութեան ունակութիւնը: Սա էլ այն աննման շարքիցն է, որոնց երկինքն է առաքում ազգերին ու աշխարհին իբրև Բարձրագոյն Օրհնութիւն:

Հայ ազգը իւր գոյութեան ընթացքում բոլոր հանճարեղութիւններից ամենէն սակաւ վարչական շնորհաց հանճարեղութիւնն է գնահատել: Մասամբ գուցէ այն պատճառով, որ իւր քաղաքական վիճակը առիթներ քիչ է ընձեռել, որ ազգը վարչական հանճարներ ստեղծէր իւր գըրեկէն: Բայց՝ մեր կարծիքով, գլխաւորապէս այն պատճառով, որ հայ ազգը իւր ժառանգական ունակութեանց մէջ ի բնէ այդպիսի մի բաց ունի, մի կոյր աչք, որ վարչական շնորհքը տեսնելու ընդունակութիւնից զուրկ է, որով և մեծապէս տուժել է:

Կայ և մի այլ՝ զուտ հոգեբանական պատճառ: Հայ ազգը տպաւորուող, դիւրափոփոխ մի խառնուածք ունի: Նա լոկ այն զօրեղ տալաւորութիւններով է ոգեսորուում, որոնք անմիջապէս

ազդում են նրա արտաքին գգայարանքների վրայ։
Բանաստեղծի քնարը վայրկենապէս գիւթում է
նրան, գերասանի խաղը շարժում է նրա հոգին
առմիջապէս։ Եղաչի տաղը թովում է նրա լսելի-
քը. գեղարուեստական պատկերը՝ շոյում նրա
շշը։

Մինչդեռ հանձարեղ վարիչն անմիջապէս
տպաւորութիւններ գործելու հնար չունի. նրա
աշխատանքը դոնփակ է կատարւում, առանձ-
նութեան մէջ, հեռու ժողովրդի գգայարանքնե-
րից։ Նրա թափած քրառունքը, ցանած սերմը եր-
կրագործի քրառունքին է նման, որոնք անմիջա-
պէս չեն պտղաբերում, այլ երկար ժամանակ
ֆնում են հողի ծոցում թաքնուած և ապա ըն-
ձիւղ տալիս ու բարձրանում և շատ անգամ լոկ
այն ժամանակ, երբ այլ ևս վարիչը չկայ։

Վարչական հանձարն ըմբռնելու և գնահա-
տելու համար մաքի առաւել լոյս պէտք է, քան
ինչ որ հայն ունի։

Հասել է ժամանակը, երբ հայը պարտական
է վարչական հանձար կարօտիլ, որոնել՝ ինչպէս
ծարաւի եղջերուն աղբիւրն է որոնում ու գլա-
նել, եթէ ուզում է առըել, եթէ ցանկութիւն
ունի յառաջ գնալ կատարելութեան ճանապար-
հով։

Մեր ազգի կրօնական, բարոյական, անտե-
սական, քաղաքական, կրթական վարչութեանց

ղեկը, կեանքը վերապահել է հայոց հայրապե-
տին։ Ուստի ժամանակակից հայրապետը միայն
որոշ գաղափարների վարդապետը չէ, այլ շատ
բարդ աշխատութեանց պարտքով ծանրաբեռ-
նուած, որի բեռը թեթևանալ, տանելի գառնալ
կարող է միայն վարչական Տիրաշնորհ հանձա-
րով։

Որպէսզի կարողանոնք զգալ, զգալ մեր հո-
գու համայն նրբութեամբ, թէ որչափ կարեոր է
մեզ վարչական շնորհքով օժտեալ հայրապետ, մենք
պէտք է գէթ հակիրճ կերպով ծանօթ լինենք
մեր կեանքի, մեր օրերու այն հրատապ խնդիր-
ներու հետ, որոնց նոր Միտքն է հրապարակնե-
տել, որոնց բանալին, լուծումը հայրապետի ձեռ-
քումն է։

Մի փոքրիկ միջանկեալ, որ մեր ակնարկած
խնդիրներու հիմքումն է գրուած։

Իմաստասէր Դեկարտի հետ պիտի համա-
ձայնինք ու ասենք, թէ բնութեան, կեանքի բո-
լոր երևոյթները խաբուսիկ են և միայն առաջօք.
Նրանք իրապէս գոյութիւն չունին, այլ զգայա-
րանական խարկանք են, ցնորք, երազ։ Բայց մի
բան, որի գոյութիւնը ժխտել չենք կարող, այդ
Միտքն է, որով բննադատում ենք. դա կայ
միայն։

Այս տեսութիւնն ընդունելով՝ պիտի յար-
մարուինք Մարի ցուցումներին։ Բանականու-

թեան ցուցումներին, որ միենոյն Աստուածային ցուցումն է, վասնզի Աստուծոյ գաղափարը ըմբռնելու, նրան մերձենալու, իմանալու միակ ճանապարհը Միտքն է:

Միտքը յարաշարժ է, յարաճուն. նա չեղանգնում, նա աճում է, զարգանում, փոփոխում: Իւր փոփոխութեամբը նա փոփոխութիւն է յառաջ բերում կեանքի ձևերի մէջ. ինչ ձև, ինչ գաղափար որ հին էր, հին մտքին համապատշաճ և սիրելի, նորին հին է թւում և անպէտք: Նոր միտքը նոր մնունդ, նոր ձևեր է պահանջում: Հնից ինչոր նորի համար իւր փայլը, գեղեցկութիւնը չի կորցրել, ինչպէս մի ոսկեղեն հնութիւն, ինչպէս մի թանկագին անմաշ ադամանդ, նորը զայն պահում, իւր գոյնով դարդարում, փայփայում է:

Մարդկային միտքը մի խորունկ անզիտակից խաղաղութեան մէջ, որպէս երազում, մերթընդմերթ կեանքի նոր ձևեր է յշանում ու դարերի յղութիւնից յետոյ՝ երկունքով է բռնւում, որ ծնանի:

Մեր օրերը մտքի երկանց օրեր են. երկունքի ցաւով է բռնուած մարդկութեան միտքը: Նա ձիչ է արձակում, նա հառաջանքներով լըցնում է աշխարհը, նա ուզում է մանուկ ծնանիլ:

Մեր ազգն անմասն չէ այդ երկունքից: Նրա

միտքը մեր կեանքի, մեր եկեղեցու մէջ նոր պայմաններ, նոր ձևեր, նոր գաղափարներ է պահանջում, նոր լուսաբանութիւն հնի:

Բայց որովհետեւ Միտքը միշտ առողջ գաւակչի ծնանում, այլ երբեմն հիւանդ և մերթ մեռեալ իսկ, ուստի և նրա պահանջների մէջ կան և անմիտ ու կորստարեր պահանջներ, որոնք ժամանակակից առողջ մտքին համապատասխան չեն:

Հայոց Հայրապետը իբրև վարչական շնորհքով լի բժիշկ, պիտի օգնութեան գայ մտքի երկունքով տանջւող հայ ազգին և եկեղեցուն. Խորունկ ուշադրութեան առնելով նրանց պահանջները, պիտի կարողանայ ջոկել լաւը վատից, առողջն հիւանդից և բաւարարէ:

Շարենք այստեղ մի քանի կենդանի պահանջներ, որոնք իբրև երկունքի ձիչ են հնչում մեր կեանքի մէջ, հայրապետի ականջին:

1. Իւրաքանչիւր ազգ իւր կրթական հաստատութիւնները յարմարեցնում է իւր ժամանակի պահանջներին. այդ պահանջներով է կաղապարում ուսանող սերնդի հոգին: Մինչդեռ մեզ օտար, մեր կեանքին անյարիք մտքերի անմարսութիւնը մի մտաւոր փորցաւով վարակել է այժմ մեր վարժարանները և նրանցում մի քաօն է ստեղծել:

Մենք կարծում ենք, թէ գրսի դիւանագի-

տութեան և ներսի անմտութեան ոռոմքներով ցաք ու ցրիւ եկող հայ սրտերը պէտք է ժողովել, միացնել, մի հայկական հոգեկան աշխարհի ամբողջութիւն կազմել, միակերպ, միաձե, միահոգի վարժարանների միջոցով, յեղյեղելով նրանցում ուսման սէր, վսեմ գաղափարների անուշ ցնորքներ, հայ խոպանացող անդաստանի վրայ աշխատելու ոգեսրութիւն:

Բայց այլ բան ենք տեսնում: Մեր վարժարաններում ամենայն բան կայ՝ բացի միօրինակութիւնից, իրական լուրջ աշխատանքից, ոգեւորութիւնից, հայրենասիրութիւնից, եղբայրսիրութիւնից, պարտաճանաչ ուսուցչութիւնից և ջանասէր աշակերտութիւնից: Խօսքի փքուն ձեւը, ճոռոմ դարձուածներ օտար բառերով համեմած (որոնք գիտնականութեան նշանն են մեր թշւառ օրերու), որպէս դատարկ սղինձ հընչում են դպրոցական ամբիօններից և ատելութեան, բաժանական հոգով թունաւորում մեր ապագայ յոյս պատանիների մաքուր հոգին:

Այսպիսի վարժարաններից մեր ազգի պահանջները լրում չեն ստանայ:

Հայրապետի վարչական հանձարը պիտի շրջի վարժարաններու վրայ, նրա ձեռքը պիտի ջոկէ ազնիւ կաւ և նրանց համար խոհական և ժամանակակից կաղապար շինէ, որպէս ճարտարարութեատ բրուտ:

2. Աղջի մի մասը լուսաւոր կուրութեամբ երեսը շուռ է տուել իւր եկեղեցուց. նա եկեղեցու մէջ ժամանակակից պիտանութիւն չի տեսնում: Ուստի և բարոյապէս, կրօնապէս ու անտեսապէս վեասում, քայլայում է եկեղեցին:

Ծայրայեղ են այս հակաեկեղեցական հոսանքի սըրընթաց արշաւանքները, բայց նրանք մի այլ՝ հակառակ ծայրայեղութեան պատասխանն են:

Կարելի չէ այդ ծայրայեղութեանց մէջ չըտեսնել նաև արդար պահանջներ:

Մեր եկեղեցու բարոյական շէնքը, նուիրապետութիւնը շատ է մամուռել անգործութեան, ծուլութեան, տղիտութեան, թուլամորթութեան, շահասիրութեան, եսականութեան մամուռով: Ուստի և մամուռից ազատ, մէջէմէջ սակաւ մասերն ընդհանուր տեղի (Փօն) վրայ էլ աշքի չեն ընկնում: Այդ պատճառով էլ միւս ծայրայեղութեամբ կուրացած բանակներն ուղղում են մամուռն այրելու համար ամբողջ շէնքը կրակ տալ:

Հայոց հայրապետի վարչական հանձարը պիտի կարողանայ մամուռ մասերն այրել, մաքուր մասերը խնամել, վերանորոգութեամբ փայլ տալ մեր նուիրապետութեան:

3. Ժողովրդի արթնցող միտքը արդարապէս պահանջում է, որ ազգից թէ օտարից մնացած եկեղեցական կալուածները շահագործւին, խնամ-

ւին յօգուտ և ի պայծառութիւն եկեղեցու և
ազգային հաստատութեանց, որոնց մուրացիկ
վիճակը ցայսօր որպէս մեղք է ծանրացած նուի-
րապետութեան վրայ:

Հայրապետի վարչական հանձարը պիտի
կենագործէ Մայր աթոռի և եկեղեցեաց տն-
տեսական մեռելութիւնը և ազատէ նրանց կո-
րաքամակ մուրացկանութեան արհամարհելի մա-
ղախից:

4. Մեր եկեղեցին իբրև հաստատութիւն
իւր կարգապահութիւնը պիտի ունենայ: Ստ-
կայն յայտնի է ազգին և յայտնի եղաւ օտար
աշխարհներին, թէ կարդ, կանոն, օրէնք, չափ,
սահման ստորագրելոց և իշխանաւորաց համար
իսպառ վերացել է մեր Մայր Աթոռից, ապա
ուրեմն և բոլոր եկեղեցիներից:

Գրդ գարու կաթողիկ եկեղեցու ականաւոր
հայրերից մինն ասում է թէ «կարգապահութիւնը,
դիսցիպլինան Աստուած է»: Այդ Աստուածը մեր
եկեղեցուց երես է թերել ու հեռացել, մատ-
նելով եկեղեցին պատահականութեան ձեռքը:

Այս վիճակն իրաւամբ արհամարհելի է
դարձնում եկեղեցին ծայրայեղ հակաեկեղեցա-
կանների համար, վշտով համակում է եկեղեցա-
սէրների հոգին:

Հայրապետի վարչական հանձարը պիտի վե-
րանորոգութեամբ հնի, ստեղծագործութեամբ

նորի կարդ, օրէնք մտցնէ եկեղեցու ծոցը, պէտք
է բաւարարութիւն ստանայ ազգի արդար պա-
հանջը, որպէսզի եկեղեցին պատկառելի դառ-
նայ և՝ եկեղեցասէրի և՝ եկեղեցատեացի և՝ օտա-
րաց համար:

5. Ամենայն քրիստոնեայ եկեղեցու միակ և
հզօր գէնքն է կենդանի խօսքը, «ըանլը», որ Աս-
տուած է: Սակայն Հայոց եկեղեցին խուլ ու համը
է գառել վերջին ժամանակներում: Ժողովուրդն
ամենայն տեղ, ամենայն խելօք ու մոլոր քարոզ
լսում է, որոնք ժամանակակից պահանջների
շուրջն են պտաւում, բայց ոչինչ չի լսում ե-
կեղեցու բեմից: Այդ լուսութիւնը անզգալի կեր-
պով համոզում է նրան, թէ յիրաւի եկեղեցին
ինքն իւր վրայ խաչ է քաշում:

Հայոց հայրապետի վարչական շնորհքը եկե-
ղեցու հովութիւնը, քարոզչութիւնը պիտի կազ-
մակերպէ, ուղղութիւն պիտի տայ նրան ժամա-
նակակից պահանջների համեմատ, որոնք նոր
լուսաւորութեամբ բակ կապեն Աւետարանի և
գաղափարների շուրջը:

6. Այրի քահանաներու կրկնամուսնութեան
խնդիր է առաջ բերել ժամանակը: Որչափ և
ազգի մի մասին խորիթ թուլ այդ հանգամանքը
այնուամենայնիւ խնդիրը հատունացած խնդիր է
և խոհեմ կարգադրութեան կարօտ:

Հայոց հայրապետի վարչական շնորհաց լոյսը

չորեքկուսի պիտի լուսաւորէ այս խնդիրը և
պատշաճաւոր ելքը գտնի:

7. Կուսակրօն եկեղեցականութեան մէջ ու
նրանց վերաբերութեամբ յառաջ են եկել նոր
պահանջներ: Վասականներից շատերի դասալիք
լինիլն ու աշխարհականաց կարդ մանիլը մինոր
երեոյթ է: Իսկ երբ ժողովուրդը դասալիքին իւր
դիրկն է ընդունում, պաշտօններ տալիս, փայ-
փայում է, այդ նշանակում է, թէ կուսակրօ-
նութեան կեանքի մէջ փոփոխութիւններ մտցնե-
լու պահանջն էլ է ծլել:

Որքան և ցանկանանք հին ձեւ պահել, եթէ
յիրաւի այդ ձեւ հինցել, նոր մտքի, նոր պահան-
ջի դէմ կենալ չենք կարող: Նա իւր հոսանքով
կը քէ, կտանի հինացածը, եթէ Հայրապետի
հանձարը չփութայ վերանորոգութեամբ յառաջ
ընկնել հոսանքից:

Ընդհատում ենք օրինակների շարքը: Վե-
րանորոգութեան կարօտ շատ խնդիրներ կան.
պետութեան և հարևան ազգաց հետ յարաբերու-
թիւնները շնորհքով պահպանելու խնդիր, հայ
պատրիարքութեանց հետ սերտ յարաբարութիւն-
ներն ու ազգային միութիւնը պահպանելու խըն-
դիր, քահանայութեան տնտեսական խղճուկ գրու-
թիւնը բարւոքելու խնդիր և այլն և այլն...

Այս բոլոր խնդիրներին լուծումն տալ կա-
րող է միայն Հայրապետի վարչական հանձարը:

Ի դէպ. հանգուցեալ հայրապետը մի քանի
խնդիրներ լուծելու փորձն արաւ, կանանց հա-
ւասար ձայն տալու խնդիր, այրի քահանաների
կրկնամուսնութեան խնդիր, ազգային ժողովի
խնդիր, ամուսնական հասուչհասի խնդիր և այլն:
Բայց և ոչ մէկն այդ խնդիրներից չլուծւեցաւ.
կեանքն ու տիրող օրէնքն ի չիք դարձուցին նը-
րանց. ոչ մի վերանորոգութեամբ չպայծառա-
ցաւ մեր կեանքը, մեր եկեղեցին, ընդհակա-
ռակն ամեն ինչ տակն ու վրայ եղաւ, փայրի-
վերոյ մնաց, հինը քանդւեցաւ, տեղը ոչ մի
շնորքով բան չգրւեցաւ, մեր հոգիներին լո՛լ
դատարկութիւն բաժին մնաց:

Ազգը բողոքեց այդ օրինակ, այդ ծնւի վե-
րանորոգութեան դէմ, ուր խոհականութիւնն ու
հանձարն էր պակաս: Մենք իսկ բողոքող շար-
քի մէջ մտանք, որ հանձարեղ վերանորոգու-
թեան այրող ծարաւն ենք զգում. մենք որ 1905
թ. Տփխիսի մի այրի քահանայի խնդրանօք այ-
րի քահանաների համար յանուն վեհափառ կա-
թողիկոսի կրկնամուսնութեան խնդիրն ենք գր-
րել, բուռն կերպով բողոքեցինք այն անշնորք
ձեի դէմ, որով կամեցան լուծել խնդիրը և գոր-
ծի յաջողութեան գլխին նոյն իսկ քար ձգեցին:

Երբ բրուտն ինձ համար մի սիրուն անօթ
շնորհու շնորհքը չունի, չպէտք է նախ իմ ունե-
ցած անշնորհքը կոտրէ, առանց որոյ ես չեմ

կարողանայ ապրել գուցէ:

Արդ, ինչպէս պիտի այս խնդիրները, այս վերանորոգութիւնը կատարէ հանձարեղ հայրապետը, Միթէ անձամբ կարող է նա ամենուրեք լինել, ամեն ինչ ժողովել, ամեն ինչ միայնակ տնօրինել:

Ոչ. հանձարեղ վարիչների շնորհաց փայլն հէնց այստեղ է երևում իսկապէս, երբ նա իւր շնորհաց մասունքներով զարդարւած գործակիցներ է ընտրում. լուռ, կարինէտի աշխատողներ, հեռու աղմուկից ու ժխորից, որոնց յանձնում է յանձնաժողովներով՝ ըստ շնորհաց տեսակի և ձեռնհասութեան, ուսումնասիրել, քաղել, լուսաբանել խնդիրները բազմակողմանի կերպով, ապա բոլոր յանձնախմբերի առաջը քննել և լըրացնել, արդիւնքները ներկայացնել լուսամիտ հայրապետին, որ ուղղութիւն տայ գործին, դեռ խնդիրները լոյս չհանած պատրիարքութեանց խորհրդարանների խորհրդածութեանն առաջարկէ, տիրող օրինաց հետ համաձայնութիւններ հաստատէ, ապա թէ հրապարակ դրուի խնդիրը և հզօր կամքով իրականանայ:

Ծնափը գործակիցներ ծնանողը, յառաջ մղողը հանձարեղ վարիչի հոգին է, որ գործիշների տիպար, դաս, շկոլայ է ստեղծում: Վայ այն վարիչին, որ անկարող է շկոլայ ստեղծել, Ազգերի պատմութիւնը իսկապէս հանձարեղ

մարդկան կենսագրութիւնն է. ոչ մի յառաջադիմութիւն ամբոխով չի սկսում, այլ հանձարեղ անհատներով: Գտէք դուք հանձարեղ վարիչ, նա ինքը արժանաւոր գործակիցներ կըստեղծէ, վերանորոգութեամբ թարմութիւն կը տայ մաշւած, խլխւած կեանքին: Եւ «որքան աւելի հանձարեղ է նորոգողը—նօվատօր—նոյնքան կատարեալ և պայծառ կերպով է արտայալում նա իւր ժամանակի իդէալներ» (Լ. Սինիցկի):

Ապա ուրեմն, Հայ Ազգ, մեր հակիրճ խորհրդածութիւններիցը դու պիտի համոզուիս թէքո Հայրապետիդ արժանեաց գերագոյն յատկանիշները պիտի լինի վարչական հանձարեղութիւն, վարչական շնորհալիութիւն, որ նոյն է թէքաջ հովտութիւն:

ԻՍԿ ԴՈՒՔ ՅԵՏ ՔԱՇՈՒԵՑԵՔ

«Հերոս ժողովուրդը ներուժներ է ընտրում եւ երջանիկ է, ստրկահոգի կամ վատմար ժողովուրդը կեղծ — ներուժներ է ընտրում, այսինքն սրիկալ խարեբային ներոսի տեղ է զնում եւ ապերչանիկ է»:

(Պարէլլ):

Մեր խորհրդածութիւններից ակներև է, թէ Հայ ազգի անլուր տառապանքները երկու

հորթ են եղած, ուստի և միշտ կուլ գնացած այլոց գէր ցուլերուն, կէտ ձկներուն։ Ո՞հ, այդ մեղը երկաթի գլչով փորագրուած է Ասքանազեան տոհմի կրծքի տախտակի վրայ. ուստի և մեր «ընտիր նախնիք» գրեթէ բան չը թողին մեզ, այլ բանաստեղծի արդար զայրութով քարերին զարկուող ու բեկւող քնարից լոկ մի հառաջանք, որ ամենուս հառաջանքն է. «Ի՞նչ թողին մեզ մեր քաջարի գոված նախնիք»։

«Լացի, ողբի անփառունակ մի հայրենիք».

Եւ այդպիսի գործիչ նախնիք ընձեռողը, այդպիսի հունձ անողը իւր առատ սերմածից ինքը՝ Հայ Ազգն էր, ծնանող հողը, սերմացանն ու սերմը, սկիզբն ու վախճան, այբն ու քէն բոլոր հայ գործիչների։

Իսկ այսօր եղկելի Հայը ինքզինքն այնքան մաշել, հիւծել է մտաւորապէս, հոգեպէս և բարոյապէս, որ երբ իւր սպանիչ և ինքնասազան անտարբերութեան քունը արտևանունքներից թոթուելով փորձում է աչք բանալ, որոնել արժանաւոր գործիչ, գոնէ մէկ հատիկ իսկական կաթողիկոսացու, այն էլ չի գտնում. որոնում է եթողիկոսացու, մէջ ու դժուարանում է ընարել։ Վայ զածների մէջ ու դժուարանում է ընարել։ Վայ, քեզ, տառապեալդ, և խախտեալդ, թշուառ Հայ, սերմանած, տնկած Պարտէզդ ես մտել, ուզում ես քաղցրահամ պառող ճաշակել ու չես գտնում. զառն են, կարի գառն։ Ի՞նչպէս սիրտդ չի պատ-

ներքին հիմնական պատճառ ունին. նախ և էականն այն է, որ մենք՝ թէս մեր «ախտացեալ ոչխարն այլոց առողջ գագանի հետ փոխանակողը չենք» բայց մեր հոգու խորքում զգում ենք, զգում ենք աղիքների գալարու մով ու սրտի մոմուռով թէ մաշուած, ստրկահողի, ախտաւոր ժողովուրդ ենք, ուստի և հերոս մարդիկ մեր գրկէն արտադրելու բարյական գորութիւնը չունինք։

Ի՞նչ բերք, ի՞նչ ատոք հասկ կարող է տալ խոպանացած հողը. ի՞նչ հերոս, ի՞նչ հանճար կարող է արտադրել ստրուկ ժողովուրդը, ըստրուկ իւր կրքերի, ստրուկ բռնութեան, ստրուկ սնափառութեան։ Միթէ տատասկից՝ թուզ. փշից խաղող։ Ի՞նչ թովիչ արձագանք կարող է լսել իւր խոպոտ ձայնից մի հիւանդ ժողովուրդ. և ի՞նչ է գործիչի ձայնը, եթէ ոչ ժողովրդի ձայնի արձագանք։ Ի՞նչ ազատ, վեհ, սուրբ գործիչ կարող է յառաջ բերել իւր ծոցից մի փըծուն, ստրկամիտ, անսուրբ ժողովուրդ։

Ազագուն հասկի հատիկը ցամաք կլինի. նիհար կովի հորթը՝ նուազ. և լցցուն, ատոք հասկերն ու գէր հորթերը, ըստ տեսլեանն Յովսէփու, պիտի կուլ տան, լափեն ցամաք հատիկն ու նուազ հորթին։

Յայսօր Հայ ազգի արտադրեալներն ու ընտրեալները մեծ մասով ազագուն հասկ, նուազ

ռւում վշտից։ Մինչդեռ այնքան շատ պիտի լինէին արժանաւորները, քաղցրահամները, որ արժանաւորներից արժանաւորագոյնը ընտրել դըժուարանայիր և որն էլ որ ընտրէիր, չզղջայիր։

Այս օրերուն հասանք, վասն զի «Զէինք հասկանում, թէ աշխարհումը, կեանքի մէջ կայ Աստուածայինը և կամ թէ չէ մենք լոկ անբացատրելի անմտութիւն ենք։ Զէինք հասկանում, թէ կայ Աստուած, ինչպէս որ կայ և՝ Մամոնայ և Սատանայ և Մեղկութիւն և շողոքորթ Կիսակրթութիւն և դատարկաձայն Պարծենկոտութիւն»։

Բայց արդ մենք հաւատում ենք՝ և չենք կարող չհաւատալ, այլապէս սարսափից ու վշտից մեր շունչը պիտի քարանար մեր կրծքի մէջ, թէ Մեծ Դժբաղտութիւնն եկաւ հասաւ Հայ Ազգի գլխին, որ նրան հանէ Զեսականութիւնից, կեղծիքից, Անտարբերութիւնից, Ստրկութիւնից ու փոխադրէ Անկեղծութեան; Ոգեորութեան, Հայրենասիրութեան Սուրբ Խորանը։

Այժմ ազատ է մեր լեզուն, ազատ է մեր հոգին։ Հոգեկան ազատութեան հողմերը փչում են մեր հայրենիքում երիտասարդական ուժգին թափով։ Նրանք վանում են մեր կեանքից աճիւնացածը, մոխրամածը, հինը, գեղնած տերեւը, թօշնած ծաղիկը։ Յիրաւի նրանք փչում են հակառակ հոսանքներով, ուստի և մերթ ընդ մերթ չոր խոփ-

ւի հետ և դալարն են ջարդում, այրում, բայց հոգ չէ. մոլորութիւնը կանցնի, Դարաւոր կաղնին իւր տեղը կմնայ և հողմերն իրենց կատաղութիւնը թողնելով մայրասէր որդու նման պիտի զեփիւոի փոխուին ու անոյշ շշունչով իրենց Մօր՝ ազգային դարաւոր կաղնու վարսերը շոյեն ու նրան պլուին։ Այս անոյշ երազ...

Հայ ազգի անլուր տառապանքների երկրորդ պատճառը իրենք՝ անարժան ընտրելիներն են, անարժան գործիչներն են եղել ու են։

Տգեղաբար օգտուելով հիւանդ ազգի հոգեկան ոյժերի թուլութիւնից՝ նրանք, այս անարժանները՝ արժանիքի վերարկուով իրենց ներքինը ծածկելով ասպարէզ են մտել այն ստորացուցիչ, դատապարտելի գիտակցութեամբ թէ անտարբերութեան խորշակով թօշնած հայը չի վանի նրանց ասապարէզից, այլ նոյն իսկ կընտրէ, կընդունի, կհամակերպի որ Բահազի երկրպագուն Բարձրեալի Տաճարը մտնի։ Սրանց հոգին երբէք չէ բարձրացել դէպի վսեմ գաղափարների բոցավառ աստղերը, որոնք իւրաքանչիւր աշխարհի երկինքն են զարդարում, այլ միշտ իջել է դէպի իրենց անձնականի խաւարը, շահը, սնափառութիւնը, եւը։

Բարէ, օգտուիլ տկար ազգի հոգեկան այլանգակութիւնից և բժիշկ ձեանալ որպէս զի ապաքինաբար դարմանի փոխարէն հիւծալթոյն

մատուցուի ինքնասպան աղջի կապտած, կարկամեալ շրթունքներուն, կարի վիրաւորական է, չարագործութիւն է, չարից չարադոյն:

Մեր Ազգային-եկեղեցական պատմութեան վերջին էջերը արատաւորուած են այդպիսի ինքնակոչ, անարժան դործիչներով, հայրապետներով «որք զանձինս ընծայեցուցին», որոնք իրենց անձով առաւել թանձրացուցին խաւարամած ժողովրդի մթան թանձրութիւնը:

Մեր իսկ օրերում, մեր աշքի առաջ, մեր լսելեաց հանդէպ եղան ու կան եպիսկոպոսներ, յետինք ի յետնոց, թանձրամիտք, խաւարասէրք, հնաւուրց ցնցոտիք հոգով, որոնք պատմութեան լոկ տգեղ օրինակների քաջալերութեամբ մտածում էին և գործում, մտածում են և գործում Հայոց Ազգի հոգիների առաջնորդը դառնար Լուսաւորչու Գահի վրայ բազմիլ:

Մէկը գրանից, մի «Հոյակապը» արժանաւորագոյն կաթողիկոսացու էր համարում ինք զինք, առարկելով թէ բոլոր եպիսկոպոսներից ամենէն առողջն է մարմնով «բօյով բուսաթով էլ սիրուն «Հոյակապ», ուստի լաւ կանի ազգը, որ իրեն ընարէ: Մի ուրիշ «գատարկուղեղ» լսել էր, թէ Մակար կաթողիկոսն իւր ընտրութեան նախօրէքին մի նոր փառաւոր մուշտակ հագած՝ հայրապետաբար շըջելիս է եղել և... ընտրուել է կաթողիկոս: Ինքն էլ այդ զրոյցը շըջապատի

շողոքորթներից լսելուց յետոյ մի թանկագին մուշտակ է կարել տալիս և դարնան տաք օրերին հագնելով Մակարանման է շըջում՝ առաջնորդարանի բակում. իսկ շըջապատող շողոքորթները մեծամութեամբ հիւանդի երազը շատ փայլուն գոյներով են մեկնում, հաւատացնելով թէ անպատճառ կաթողիկոս կլինի (մուշտակի շնորհիւ) մանաւանդ թէ Տաճկաստանի հայոց մի լըրագրում անունը տուել են:

Եւ այն, և այլն, և այլն...

Զէ, երբէք, մենք չենք կարող համաձայնիլ մեր բազմավաստակ մեծ հայրենասէրի և հրապարակախօսի հետ, թէ «Հայ եկեղեցական դասի ամեն բարձրաստիճան հոգեորական թեկնածուէ» (կաթողիկոսութեան):

Ո՞չ. անարժանի թեկնածութիւնը յանցանք է, առանց իւղի ունայն ու հանգած լապտերով հարսանեկան հանդէս գնալն յանցանք է, ինքնընծայացումն յանցանք է, ծայրայեղ անհամեստութիւն է և յանցանք:

Մեր պատմութեան մէջ կան փայլուն օրինակներ, ինչպէս և հռոմէական պատմութեան մէջ. ամենէն արժանաւոր կաթողիկոսացուներին հայ ազգը բոնութեամբ, աղաչանքով է համել իւր համեստ աշխատանքից և Գահի վրայ բազմեցըել: Նրանք իրենց աննման հսմեստութեամբ գործի մեծութեան առաջ այնքան փոքր

էին զգում իրենց, որ խուսափում էին պատասխանառութիւնից Աստուծոյ և ազգի առաջ Այդպէս են ընարուել ո. կուսաւորիչ, ո. Ներսէս Մեծ, ո. Սահակ Պարթև և նման արժանաւորներ:

Երբ հայրենիքը վտանգի բերանումն էր, գիտակից, հայրենասիրական փայլով շողզողուն Հոռմը իւր զինուորական կենդանի պանտէօնից շընարեց զօրաց ընդհանուր հրամանատար, այլ Յինցինատոսին, որ իւր արտն էր վարում, երբ հրաւիրակները հայրենիքի հրաւէրը բերին նրան:

VI ԽԱԼ ԿՈՒՐ յետ քաշուեցէք

Հեռու քեզանից, հայ ազգ, ինքնընծայ անարժան թեկնածուներ, հեռու այդ փծուն շարադրութիւնները Հոմերոսի եղիականի կազմի մէջ:

Հայ եկեղեցականները՝ երիտասարդ թէ ծեր, որոնց վիճակուած է Հայրապետական ընտրութեանը պատգամաւոր լինել, պարտական կը մընան Աստուծոյ, Ազգի և յետնորդ սերնդի առաջ, պարտական՝ պատմութեան և մարդկութեան առաջ, եթէ որևէ անձնական շահի, բարեաց, ասպարիզի համար քաշուին բողոքելուց անարժան թեկնածութեան դէմ: Երբ հրապարակի վրայ վխտում են անարժանները, անյայտութեան մէջ են մնում իրենց համեստ աշխատանքով զբա-

դուած Յինցինատները, Խորենացիները և տուժողը Ազգն ու Եկեղեցին են լինում:

Զարիք են այդ ինքնընծայողները, որոնց մտմտուքի դէմ պիտի մաքառէ հայ ազգը, անձնիւր հայը:

«Այն չարիքը, որ մի բթամիտն է պատճառում աշխարհին, իւրաքանչիւր բթամիտը, որ այնքան դաժան է, բեղմնաւոր իւր անվերջ հետևանքներով, որպիսին մերն է, ոչ մի թուանշանով արտայայտել կարելի չէ: Սրիկայ-խարերայ կօշկակարն ինքն ըստինքեան արգէն բաւական մեծ չարիք է: այդ բանը հաստատել կարող են կոծոծ (մազոլ) կարողները և այն մարդիկ, որոնք միայն փափուկ հողաթափներ հազնելու են դատապարտուած: Հապա խարեբայ քահանան, խարեբայ քահանայապետը, խարեբայ թագաւորը: Ինչու բոլոր արդարամիտ քաղաքացիները խելագարեալ չեն յարձակուում զսպել նրան, որպէս կզսպէին նրանք հրդեհը: Անվիճելի է թէ ամեն մի արդարամիտ քաղաքացի առաջնորդուում է Աստուծոյ ցուցումներով, իւր հոգու ցուցումներով, աշխարհի բոլոր լուռ ու մունջ բարբառների ցուցումներով անել այն, ինչ որիրենից է կախուած: այդպիսի խղճուկ բթամիտ խարեբային և աշխարհին օգնութեան գալու, որ հիւծուում է նրա ձեռքին: Փութա, օգնիր նրան գոնէ այնքան, որ նա հեռացուի. վասնզի ամեն

ինչ այնքան հինգած, այնքան չորցած, այնքան գիւղափառ է. իսկ նա հրդեհից աւելի աւերիչ է: Քշէ նրան գոնէ դէպի վար, խստիւ կաշկանդէ նրան կրակարանի, օճախի մէջ, այն ժամանակ նու հրդեհ դառնալուց կղադարի, նա խոհանոցի կրակի նման փոքր ի շատէ օգտակար կլինի: Հուրը ամենալաւ ծառան է. բայց և նրպիսի տէր: Յիրաւի այդ խղճուկ թթամիան էլ որեւ գործածութեան համար է ծնուած. բայց ինչու դուք տիրական իշխանութեան հասցնելով նրան՝ ուզում էք հրդեհ դարձնել, որ թշուառութիւն է հօտի համար, դժբաղգութիւն՝ աշխարհի համար» (Կարէլլ):

Անձնիւր հայ մարդ, անձնիւր հոգևորական և աշխարհական, որի հոգին պատմութեան թթամիաների թէ արդի թթամիաների վարած աւերիչ չարիքով, լափող հրդեհով խանձուելէ և փորձու. թեան հրոյքովի մէջիւր մարդկային սխալմաքներն այրելով՝ ձոյլ ոսկի է դուրս եկել պիտի մաքառէ անարժանների ինքնընծայ թեկնածութեան դէմ: Ժամանակ է որ իւր կենսական հիւթիցը քամուած, բարոյապէս և մտաւորապէս խոիւ գտուած հայրենիքը ապատենք թթամիաների չարեաց հրդեհից: Իսկ դուք յետ քաշուեցէք.

Դուք՝ որ ըրիստոնէական համեստութեան սիրուն պատմուածնը ձեր վրայից վար նետելով՝ ըմբիշի յանդկնութեամբ կրկէս էք իջած բոնու-

թեամբ կամ՝ ճարպիկութեամբ հայրապետական սրբազն գահը փախցնելու, դուք յետ քաշուեցէք:

Իդէալների տեսակներն էլ իրենց ճակատագրական սահմանն ունին. նրանք էլ հնանում են, նրանք էլ ընկնում, նրանք էլ մեռնում են: Մենք պատրաստ ենք գնահատել ձեր անցեալ ծառայութիւնը, ձեր իդէալները (եթէ ունեցել էք), որոնք մի ժամանակ թարմ էին, Յյժմ նրանք հինցել են ձեզ հետ միասին: յանուն տառապեալ ազգի սիրուն, եթէ մի կաթիլ անապուկան սէր կայ ձեր սրտում, գրկեցէք ձեր ցնցուի իդէալներն ու յետ քաշուեցէք: Դուք արդէն նմանում էք ահիւանդութիւնից ուռած ու փքուած այն մարմիններին, որ ապշութեան մէջ են ընկնում): Դուք յետ քաշուեցէք:

Դուք՝ որ իմաստութիւն չէիք սիրում, ինչպէս որ չեն սիրում անմիտները, այլ ձեր ախորժակը, ձեր լեցուն բաժակը, դուք յետ քաշուեցէք:

Դուք՝ որ արդարներին հալածում էիք, անկիւններում մաշում նրանց մարմինը, աղնիւ գաղափարներով լի այդ մաքուր անօթը. Դուք՝ որ Աստուծոյ հաւատով, ազգի սիրով, եկեղեցու փառքով բորբոքուն և ձեր դէմ ուղղուած լեզուները կտրեցիք, տիրոջ տաճարի մարդարեների ձայնը կոկորդի մէջ խեղդեցիք, մերթ ասպարիզից, մերթ կեանքից իսկ վանելով, հասել

է ձեր ժամը, դուք յետ քաշուեցէք:

Դուք՝ որ նախնեաց թողած անգին ժառանգութիւնը իւր անվթար վիճակովն ստացաք, բայց վատնեցիք, ապականեցիք, վարկարեկ արք և ձեր թշուառ յետնորդներին թողիք միայն բարոյական աղքատութիւն, գէշ օրինակ, գէշ դաստիարակութիւն, ժողովրդի արհամարհանք ու զայրոյթ, բաւական է. Աստուած սիրէք, յետ քաշուեցէք:

Դուք՝ որ թշուառ էիք համարում ձեզ, երբ չէիր կարենում ուտել և սրջանիկ, երբ չէիր կամենում աշխատել, դուք յետ քաշուեցէք:

Դուք՝ որ սննդում էիք նախանձով, դուք ապիկարութեամբ, շնչում լոկ սնափառութեան համար.

Դուք փոքրիկ անցորդներ, որ ձշմարիտ մեծութիւնները ոչ միայն տեսնել չէիք կամենում, այլ հալածում էիք.

Դուք՝ որ ձեր այցելուներին լոկ ձեր կերպասէ հանդերձներն ու զարգերն էիք ցոյց տալիս, իրրե ձեր միակ գանձը, միակ արժանիք, դուք յետ քաշուեցէք:

Դուք յետ քաշուեցէք, ձեր կենաց մոմը երկու ծայրիցն է վառում, որ հանգչի: Դուք յետ քաշուեցէք:

Հասել է ժամանակը երբ անհատական վատք ասուած բանը անբարբառ լուսութեան մէջ պիտի

թաղենք: Վերանորոգութեան ու վերակենդանութեան տապով տագնապող եկեղեցին ու աղոգը նոր իգէաներ է ասպարէզ հանում իւր գործիչների, իւր սուրբ Հայրապետի համար. Աշխատանք, Լոյս, Սէր, ջերմ Հաւատ, Արիութիւն: «Բնութիւնը երջանիկ գափնիներ, յաղթական դափնէ պսակները միայն քաջարիների և հաւատարիմների համար է սահմանել»:

Հասել է ժամանակը, որ սահմանափակ, սընապաշտութեան կերպարանք ընդունած պաղԱստուածպաշտութիւնը ինչպէս և աւերիչ Անատուածութիւնը «ոռից բղխում են այնքան բազմաթիւ թիւներ և ստեր, որոնցից ամեն մէկը մի թշուառութեան աղբիւր է, ընկնին, հոսին, աւազի տակ անցնեն անհետացող ջրերու նման:

Հասել է ժամանակը, որ կեղծ պահպանողականութիւնը, որ մարգարիտն ու ցնցոտին հաւասար գուրգուրանքով պահել է ուղում, ինչպէս և կեղծ ազատամտութիւնը, որ ոչ այլ ինչէ, եթէ ոչ Անասնամտութիւն, քաշուին, հեռանան մեր կեանքից, մեր կենաց, մեր հոգիների ղեկավարութիւնից:

Հասել է ժամանակը որ զգանք, ըմբոնենք թէ «հաւատը գէպի Անտեսանելին, Անձառելին, Աստուածայինն ամենուրեք է, ամեն բանի մէջ է, ինչոր տեսնում, գործում, կրում ենք. այդ հաւատն է ամեն տեսակ հաւատի էութիւնը»:



Հասել է ժամանակը, եթք գործիչներն ու Հայրապետը փոխանակ վայելիքի կրօն դաւանելու, պիտի դաւանեն այն կրօնը որ «Տանջանքի կրօն է կոչում, Յիսուսի կրօնը» «Բոլոր Աստուածների կեանքը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ վրահագոյն վիշտ, որպէս անվերջ աշխատանքի և անվերջ կռուի լարուած ձգուումն»:

Հայ ազգն ուզում է ստրկամտութիւնից ելնել, հերոսամալ, որ հերոս ծնանի. նա նոր իդեալներով է ցօղում հայրապետական գահը, ուրոնց շուրջը փշէ պսակ է բոլորած և հրաւիրում է արժանաւորագունին, հերոս աշխատաւորին այդ իդեալներն զգենալու, այդ փշէ պսակով զարգարուելու աշխատանքի և պատերազմի մէջ:

Եկ, Հայոց Ազգի բարեկամ, Ա. Հայրապետ, դաժան պատռւհամներով խոհեմացած՝ Հայ Ազգի քաղցր հրաւէրով ել համեստ առանձնութեանդ միջէն, եկ բազմելու Լուսաւորչի ս. Աթոռի վըրայ, եկ աշխատանքի սուրբ ասպարէզ: «Բարեկամ, ոչ մի բարբառ և ոչ մի համբաւ յաւիտենական չէ, անմիտ է և սուտ, միայն բարեխղճութեամբ կատարած քո իսկական աշխատանքն է յաւիտենական, ինքնէ Աշխարհի Ամենակարող Նիմուղիքն ու Ճարտարապետը: Պինդ գրկիր աշխատանքը և թող «Փառքի» ու մնացած բաները բարբանջեն, որքան ուզում են» (Կարլէլ): «Այսուեղ յաւիտենական Հանգստութեան

մէջ, ուր ամեն ինչ կատարելութիւն է, ձեզ տեսնում, ձեզ հաւատարիմներիդ վարձ են պատրաստում, աշխատեցէք յուսացէք», (Գեօթէ):

Իսկ Դուք Փառքի, Նախանձի և Անցաւորի գերիներ, Խաւարի բարեկամներ, Հայոց ազգին գէթ մի բարիք արէք. հանգիստ թողէք նրան, ձեր կաթուղիկոս դառնալու շշունջն առէք ու յետ քաշուեցէք Հայրապետական զահից:





ՀՀ Ազգային գրադարան



NL0174174

